# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԶ. ՏԱՐԻ ԹԻՒ 38 (1288) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 28, 2006
VOLUME 26, NO. 38 (1288) SATURDAY, OCTOBER 28, 2006

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ԼԱՐՔ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՇԱԿԵՐՏ ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻ ԲԱՑՈՒՄԸ

***ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ***

Սրտի անխառն ուրախութեամբ ներկայ գտնուեցանք մեր գաղութի կեանքին մէջ իր իմացական բնոյթով աննախընթաց հանդիսութեան մը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 22 Հոկտեմբեր 2006, կ.վ. ժամը 3:00-ին, 543 Arden Avenue-ի վրայ, Հարաւային Քալիֆորնիոյ հայաշատ քաղքօններէն, Կլենտէյլ քաղաքի մէջ:

Հոծ, այլապէս ընտրեալ հայ ու օտար քաղաքական, հասարակական, հոգեւոր ու գեղարուեստասէր ընտրեալ հասարակութիւն մը իր մասնակցութիւնը կը բերէր բացման գործընթացին՝ պերճօրէն բարենորոգուած երաժշտական դպրոցի մը, որուն մուտքի ժապաւէնը կտրեց երկրի Ներկայացուցչական տան ականաւոր դէմքերէն Ատամ Շիֆ եւ օրհնութեան արարողութիւնը կատարեցին Յովնան Արք. Տէրտէրեան եւ Մուշեղ Արք.Մարտիրոսեան, որուն կ'ընկերակցէր Հոգշ. Տէր Պարթեւ Վրդ. Կիւրիւնեան:

Արդար, իրապէ՛ս տարիներու երազի մը հպարտութիւն պատճառող նուիրագործում մըն էր օրուան շարժառիթը, որ կուգար Լարք Երաժշտական Ընկերակցութիւնը օժտելու սեփական երաժշտանոցով մը, վերջակէտելով անոր թափառական այլ խնդրական պայմաններու տակ գործելու ժամանակակից տխուր անցեալը:

Շատ գեղեցիկ պատկերացումով մը, երաժշտանոցը ճրիաբար վերականգնող ու բարեզարթող երկրաչափ՝ Մայք Եուսուֆեան, որ նոյն «շինարար» ոգիով վերականգնեց ու բարեզարթեց նաեւ Փասատենա քաղաքի Հ.Բ.Ը.Մ. ի Երկրորդական վարժարանը, նկարագրեց այդ երազի իրագործման տպաւորիչ պատմութիւնը, թէ ինչպէս «Գանձին» մէջ գտնուող տասը հազար տոլարի դիմաց՝ Լարք Ընկերակցութիւնը հրաշքի համազօր մարտահրաւէր կարդաց եւ տիրացաւ երկու միլիոն տոլար արժողութեամբ ներկայ եռայարկ կալուածին:

Մեր ժողովուրդը մնայուն արժէքներու գիտակցութիւնը ունեցող ժողովուրդ է: Գտնուեցան մշակութասէր հայորդիներ, բարերար գեղարուեստասէր-անձնաւորութիւններ, որոնք հարիւր հազար, յիսուն հազար, քսանհինգ հազար, տասը հազար տոլարէն՝ մինչեւ հարիւր տոլար՝ իրենց իշխանական ու սրտաբուխ նուիրատուութիւններով Լարք Երաժշտական Ըն-

Շար.ը էջ 4

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԿՐԿԻՆ ՄՏԱՀՈԳՈՒԱԾ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՋՈՐԴ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ



ԵԱՀԿ-ի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Ճուլիա Ֆինլի ելոյթ կ'ունենայ Երեւանի մէջ

*Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան (ԵԱՀԿ) Միացեալ Նահանգներու դեսպան Ճուլիա Ֆինլի անցեալ շաբաթ Հայաստան կատարած իր այցելութեան ժամանակ կրկին հնչեցուց իր մտահոգութիւնը, 2007 թուականի խորհրդարանական ընտրութիւններու ընթացքը ԵԱՀԿ-ի առաքելութեան կողմէ հսկողութեան ենթարկելու հարցի կապակցութեամբ:*

*Ըստ Տիկ. Ֆինլիի Հայաստանի մէջ իր հանդիպումներու ընթացքին ոեւէ մէկը չէ ըսած թէ իշխանութիւնները մտադիր չեն հրաւիրել ԵԱՀԿ-ի դիտորդներ: Սակայն, հայաստանեան պաշտօնեաներէն մէկը, որու անունը ան նախընտրեց չյայտնել, իր հետ ոչ պաշտօնական զրոյցի ընթացքին ակնարկած է, թէ «գուցէ իշխանութիւնները չցանկանան հրաւիրել ԵԱՀԿ-ի դիտորդներ»:*

*Դեսպան Ֆինլիի կարծիքով, շատ կարեւոր է թէ կարճաժամկէտ, թէ երկարաժամկէտ դիտորդական առաքելութեան իրականացումը Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններու ամբողջ ընթացքին:*

*«Մենք կը քաջալերենք կառավարութեան, որպէսզի հրաւիրէն ԵԱՀԿ-ի դիտորդներուն եւ երկարաժամկէտ, եւ կարճաժամկէտ առաքելութիւն իրականացնելու համար», - ըսաւ ան, աւելցնելով, որ ատոր համար անհրաժեշտ է, որպէսզի Հայաստանի իշխանութիւնները նախապէս ուղարկեն հրաւէրը:*

*ԵԱՀԿ-ի երեւանեան գրասենեակի ղեկավար Պրեախին Ազգային Ժողովի Նախագահ Տիգրան Թորոսեանէն խնդրած է, որպէսզի հայկական կողմը դիտորդական առաքելութիւն իրականացնելու համար հրաւէրը միջազգային կազմակերպութիւններուն ուղարկէ մինչեւ տարուայ վերջը:*

*Հայաստանի Ազգային Ժողովի Նախագահ Տիգրան Թորոսեան «Ազատութիւն» ռատիոկայանին այս կապակցութեամբ ըսած է. - «Ես կարծում եմ, բոլոր ազդեցիկ միջազգային կազմակերպութիւնները, որոնք աւանդաբար դիտորդական առաքելութիւն են իրականացնում ընտրութիւններում, ճիշդ կը լինի, որ հրաւիրուեն»:*

*ԵԱՀԿ-ն, մասնաւորապէս, ըստ դեսպան Ֆինլիի, չի կրնար դիտորդական առաքելութիւն իրականացնել առանց հրաւէրի:*

*«Դուք պէտք է ճնշում*

Շար.ը էջ 4

## Հ.Բ.Ը.Մ.100 ԱՄԵԱԿ

## ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԸ ԸՍՏ ԱՐԺԱՆՒՈՅՆ ՅԱՅՏՆԵՑ ԻՐ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

*Մեզի համար մեծ ուրախութիւն է ականատես վկաները դառնալ մեր ժողովուրդի երախտագիտական զգացումներուն հրապարակային դրսեւորման: Մենք այդ բախտաւորութիւնը ունեցանք ընթացիկ 2006 տարուան ամբողջ տեւողութեան, Հ.Բ.Ը.Մ.-ի 100-ամեակին նուիրուած իր նախընթացը չունեցող կազմակերպուած յաջող հանդիսութիւններու եւ ճաշկերոյթ տօնախմբութիւններու բախտորոշ առիթներով, որոնց համար, օրին մեր գնահատութիւնները յայտնեցինք Հարաւային Քալիֆորնիոյ Շրջանակայինին ու անոր արժանաւոր Ատենապետ՝ Տիար Վահէ Իմաստունեանին: Հ.Բ.Ը.Մ.-ի 100-ամեակին նուիրուած մեծարանքի հանդիսութիւնները, ինչպէս որ կ'իմանանք, պիտի շարունակուին Փարիզ, Վերսայի պալատի խայտաբղէտ ընդունելութեամբ ու համանուն Միութեան Երեւանի մէջ տեղի ունենալիք եզրափակիչ համագումարով:*

*Մեր ուրախութիւնը տակաւ խորացաւ, երբ վերահասու դարձանք, որ Հարաւային Քալիֆորնիոյ Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանը Ինքն իր կարգին կազմակերպած է «Երախտագիտութեան երեկոյ» մը, նուիր-*

Շար.ը էջ 19

## ԽՕՍՔԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՆԱՀԱՆՋԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆ 101-ՐԴ ԴԻՐՔԻ ՎՐԱՅ

*«Լրագրողներ Առանց Սահմաններու» կազմակերպութեան հրապարակած տեղեկագիրին համաձայն Հայաստան խօսքի ազատութեան առումով ետ քայլի մէջ է: 2003-2004 թուականներուն, Հայաստան իր գրաւած 90-րդ աստիճանէն ներկայիս իջած է 101-րդ տեղը:*

*170 երկիրներու շարքին Հայաստանը խօսքի ազատութեան առումով կը զիջի ոչ միայն Վրաստանին, այլ նաեւ Թուրքիոյ, որ վերջին մէկ տարուայ ընթացքին բազմաթիւ դատական գործեր յարուցած էր լրագրողներու դէմ ու այդ պատճառով արժանացած՝ եւրոպական կառոյցներու քննադատութեան:*

*Միջազգային կազմակերպութիւնը այս առթիւ դիմած է Հայաստանի մէջ աշխատող լրագրողներուն, փորձագէտներուն, օտար լրատուամիջոցներուն՝ խնդրելով մատնանշել անցած տարուայ սեպտեմբերէն մինչեւ օրս խօսքի ազատութեան դէմ կիրառուած բռնութիւններն ու սահմանափակումները:*

*Ըստ կազմակերպութեան Եւրոպայի եւ ԱՊՀ-ի երկրներու բաժինի ղեկավար Էլզա Վիդաալիի, երկու լրագրող ենթարկուած են սպառնալիքներու, 5 լրագրողներ՝ յարձակման: Կը նշուի նաեւ, որ մասնաւոր լրատուամիջոցներու մօտ առկայ է ինքնագրաքննութիւնը, իսկ հանրային լրատուամիջոցներու մօտ՝ պետական գրաքննութիւնը: Բացի այդ, ըստ կազմակերպութեան ստացած պատասխաններուն, Հայաստանի մէջ կը գրաքննուին նաեւ որոշ ինթըրնէթային կայքեր:*

## ԸՍՏ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՄԱՆ ՀԱՐՑԸ ՕՐԱԿԱՐԳԻ ՎՐԱՅ Է

*Հոկտեմբեր 25-ին Հայաստանի Խորհրդարանի առջեւ ելոյթ ունենալով, Արտաքին Գործոց Նախարար Վարդան Օսկանեան յայտարարած է, որ տարածքներու յանձնման հարցը իսկապէս առկայ է Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման բանակցութեան օրակարգի վրայ, սակայն բանակցութիւնը տեղի կ'ունենայ փաթեթով, իսկ փաթեթին մէջ առաջնայինը Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման եւ Ղարաբաղի կարգավիճակի հարցն է, անկէ ետք միայն կու գան յաջորդ այլ հարցերը:*

*Օսկանեան յայտնած է որ, բանակցութեան նիւթ է նաեւ Ատրպէյճանի վերահսկողութեան տակ գտնուող հայկական տարածքները, մասնաւորապէս Մարտակերտի եւ*

Շար.ը էջ 4

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԷԼ Է ԲԱՐԳԱՒԱՃԵԼ

2003 թուականից Հայաստանի կառավարութիւնը հռչակեց անհաշտ պայքար կոռուպցիայի բոլոր դրսեւորումների դէմ ու միջազգային հանրութեանն ի տես պաշտօնապէս ընդունեց յայտնի հակակոռուպցիոն ռազմավարութիւնը: Ռազմավարութեան նպատակը, ըստ կառավարութեան ընդունած փաստաթղթի, «կոռուպցիայի յաղթահարումն է, այն ծնող եւ դրա տարածումը խթանող պատճառների ու պայմանների վերացումը, հանրապետութիւնում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձեւաւորումը, որն էլ իր հերթին կը նպաստի ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակութեան եւ իրաւական պետութեան հիմնաւոր հաստատմանը, ազատ տնտեսական մրցակցութեանը, տնտեսութեան զարգացմանը եւ աղքատութեան նուազեցմանը»: 2004թ. Յունիսին Ռոբերդ Քոչարեանի հրամանագրով ստեղծուեց Կոռուպցիայի դէմ պայքարի խորհուրդ՝ բաւական ներկայացուցչական կազմով: Հակակոռուպցիոն ռազմավարութեան ընդունուած ծրագիրը նախատեսւում էր աւարտել արդէն 2007-ին, իսկ դրա հիմնական միջոցառումների կատարման ժամկէտները սահմանափակւում էին 2006-ով:

«Պաշտօնի չարաշահում՝ անձնական օգուտ ստանալու նպատակով»,- փորձագէտների հաւաստմամբ, այս պարզ ձեւակերպմամբ կարելի է սահմանել կոռուպցիա ասուածը: Ի՞նչ է փոխուել 3 տարիների ընթացքում, որքանո՞վ է նուազել կոռուպցիան ՀՀ-ում եւ նուազե՞լ է արդեօք: Հարցի պատասխանը այս կամ այն չափով ունի Հայաստանում ապրող իւրաքանչիւր քաղաքացի: Աւելի շատ ասելիք կ՚ունենան նրանք, ովքեր առօրեայում այս կամ այն կերպ առնչւում են կոռուպցիայի դէմ մարտնչողների կամ նրանց կոլեգաների հետ: Սակայն կան նաեւ կոռուպցիայի դէմ ՀՀ կառավարութեան պայքարի փորձագիտական գնահատականներ միջազգային տարբեր կազմակերպութիւնների կողմից, որոնք մեղմ ասած չեն խրախուսում ՀՀ իշխանութիւնների պայքարի տեմպերը:

«Թրանսփարենսի ինթերնէշընլ» միջազգային կազմակերպութիւնն իր վերջին՝ «Հակակոռուպցիոն քաղաքականութիւնը Հայաստանում» աշխատութեան մէջ վերլուծել է անցած երեք տարիներին ՀՀ կառավարութեան կատարած աշխատանքը՝ դրանում ներառելով միջազգային այլ կազմակերպութիւնների գնահատականները: Ըստ այդմ, տարբեր կազմակերպութիւնների անցկացրած հարցումների արդիւնքներով, անցած երեք տարիներին կոռուպցիան Հայաստանում հակառակի պէս ոչ միայն չի նուազել, այլեւ աճել է:

Գործարար միջավայրի եւ ձեռնարկատիրական գործունէութեան վերաբերեալ հարցումների (BEEPS) շարքի 2005թ. ուսումնասիրութիւնը ցոյց է տուել, որ Հայաստանում 2002թ. համեմատ կոռուպցիան դարձել է գործարարութիւնը խոչընդոտող աւելի լուրջ խնդիր: Հարցման մասնակիցները նշել են, որ կաշառքներին ուղղուող միջոցների ընդհանուր ծաւալը 2002-ից մինչեւ 2005-ը զգալիօրէն աճել է: Իրավիճակը վատթարացել է նաեւ օրէնսդրական դաշտի ձեւաւորման գործընթացում, երբ «խաղի կանոնները» հիմնաւորապէս ու մշտապէս խեղաթիւրւում են յօգուտ փոքրաթիւ արտօնեալների: Ըստ հարցման տուեալների, կաշառակերութիւնը տարածուած է դատարաններում, մաքսային, հարկային, լիցենզաւորման, պետական գնումների, հողայատկացման եւ այլ ոլորտներում:

2006թ. լոյս տեսաւ Համաշխարհային բանկի՝ «Կոռուպցիայի դէմ պայքարը անցումային տնտեսութեամբ երկրներում. Ո՞վ է հասել յաջողութիւնների... եւ ինչո՞ւ» հաշուետուութիւնը, որտեղ ամփոփուել են գործարար միջավայրին եւ ձեռնարկատիրական գործունէութեանը վերաբերող ուսումնասիրութիւնների արդիւնքները: Հաշուետուութիւնում մասնաւորապէս մատնանշւում է, որ չնայած 2003թ.-ին Հայաստանում մշակուել է Կոռուպցիայի դէմ պայքարի ռազմավարութիւն եւ դրա իրականացման միջոցառումների ծրագիր, իսկ 2004թ. ստեղծուել է բարձր մակարդակի Հակակոռուպցիոն խորհուրդ՝ երկրի վարչապետի նախագահութեամբ, կոռուպցիայի հետ կապուած իրավիճակը 2002թ. համեմատ 2005-ին զգալիօրէն վատթարացել է մի շարք չափանիշներով:

«Ֆրիտըմ Հաուզ» (Freedom House) կազմակերպութեան՝ 2006-ին հրապարակուած ուսումնասիրութեան տուեալների համաձայն, որոնք ամփոփուել են «Անցումային երկրները» հաշուետուութեան մէջ, 1999թ. ի վեր Հայաստանում կոռուպցիայի հետ կապուած իրավիճակի գնահատականը չի փոխուել՝ մնալով 5.75: Այստեղ օգտագործուել է 1-7 սանդղակը, որտեղ 7-ը նշանակում է բացարձակ կոռումպացուած, իսկ 1-ը՝«մաքուր»:

Աշխարհի 113 երկրներում «Թրանսփարենսի ինթերնէշընլը» կատարած ուսումնասիրութիւնները պարզել են, որ Հայաստանը գտնւում է այն երկրների ցանկում, որոնցում առկայ է համատարած եւ մեծ չափերի հասնող կոռուպցիա եւ դա սպառնում է այդ երկրների սոցիալական եւ քաղաքական կայունութեանը:

Չնայած այս ամէնին, ՀՀ կառավարութիւնը մտադիր է նոյն ոգով շարունակել կոռուպցիայի դէմ պայքարի ծրագիրը: Կոռուպցիայի դէմ պայքարի խորհուրդը որոշել է նոր ծրագիր գրել առաջիկայ 3 տարիների համար:

Ինչո՞ւ ոչ, ծրագիրը ֆինանսաւորւում է բիւջէից, իսկ միջազգային տարբեր ֆինանսական կազմակերպութիւններ այն ծաղկեցնում են տարբեր գրանտներով ու վարկերով:

«Թէ որքանով է նոր ծրագիրը ելնելու գործող ռազմավարութեան արդիւնաւէտութեան գնահատման արդիւնքներից եւ ինչպէս ու ով է իրականացնելու նման վերլուծութիւնը, պաշտօնական տեղեկութիւններ չկան»,-մտահոգութիւն է յայտնում «Թրանսփարենսի ինթերնէշընլ» կազմակերպութիւնը՝ յաւելելով, որ 2006թ. Օգոստոսի դրութեամբ ռազմավարութեան ծրագրի նախագիծը չի հրապարակուել մամուլում եւ ոչ էլ քննարկուել է շահագրգիռ կողմերի հետ:

ՄԱՐԻՆԷ ԽԱՌԱՏԵԱՆ
«ՏԱՐԵԳԻՐ»
(Յապաւումներով)

# ԵՐԲ ԳԵՐԻՇԽՈՒՄ ԵՆ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ

Այն, որ Ջաւախքի հարցում հատուածական շահեր են գերիշխում, ունի իր վառ դրսեւորումը. եթէ իշխանութիւնները հայ-վրացական յարաբերութիւնների համակարգուած հայեցակարգ ունենային, բանը չէր հասնի ծիծաղաշարժ պատճառաբանութեամբ Ջաւախահայ գործչի դէմ քրէական հետապնդման, որը յաջորդել էր նրա դէմ կրիմինալ յարձակմանը, ինչը արդէն իսկ մեծ աղմուկ է հանել եւ հանգեցրել ԱՄՆ-ի շէնքի մօտ ընթացող շուրջօրեայ նստացոյցի: Հատուածական շահեր են գերիշխում եւ Արցախի հարցում. էսօր-էգուց Օսկանեանն ու Մամեդեարովը Փարիզում համանախագահների հետ քննարկելու են, այսպէս կոչուած, «նորացուած» առաջարկութիւնները, սակայն իշխանութիւնների հէչ վերջը չէ: Իշխանական ամենաբարձրաստիճան այրերը այդ կենսական հարցի մասին յիշում են երկու դէպքում. մէկը՝ երբ պէտք է դուր գալ որեւէ գերտէրութեան, վերջինից «դաբրո» ստանալու համար, իսկ միւսը՝ երբ պէտք է դիմացինին ներկայացնել «Ղարաբաղը տուող», իսկ ինքն իրեն՝ «չտուող»: Եւ, ի դէպ, ընդամէնը մէկ տարուայ ընթացքում այդ երկու գործառոյթները յաջողութեամբ կարողացաւ «մէկտեղել» նախագահական աթոռին ձգտող Սերժ Սարգսեանը:

Նոյնը վերաբերում է եւ կրիմինալի հիմնախնդրին: Սկզբում քարոզչամեքենան իրեն ճղում էր, թէ իշխանութիւնում համակարգուած կրիմինալ չկայ, իսկ ներիշխանական հաշիւներում պատգամաւոր Յակոբ Յակոբեանին «մատաղ անելուց» յետոյ կրիմինալի պաշտպանի պիտակը փորձում են փակցնել ընդդիմութեան ճակատին, քանզի վերջինս ԱԺ ամբիոնից պարզ ու յստակ ասել էր, որ տուեալ պարագայում որեւէ ցանկութիւն չունի մասնակցել ներիշխանական «ռազբորկաների»:

Ժամանակին Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի կողմից բարձրագոյն պարգեւ ստանալուց յետոյ, այժմ էլ Արթուր Բաղդասարեանը բարձրագոյն պետական շքանշան է ստացել Աւստրիայի նախագահից: Անշուշտ, դա հենց հատուածական շահերի պատճառով կը հանգեցնի հերթական իշխանական «խանդի տեսարանների», փոխանակ դիտարկուի համապետական շահի շրջանակում հայ-ֆրանսիական եւ ընդհանրապէս հայ-եւրոպական յարաբերութիւնների հիմնադրոյթների ենթատեքստում: Ի վերջոյ, սրանց մտքով երբեւէ կարո՞ղ է անցնել, որ ընդդիմադիր գործիչը միջպետական յարաբերութիւններում ունակ է ներդրում ունենալ, թէ՞ սեփական հարցերը լուծող իշխանական գործչի պարագայում ցանկացած շփում եւ յարաբերութիւն ազգօգուտ է, իսկ ընդդիմադիրի դէպքում՝ բացառապէս «շպիոն Օնիկի» պիտակ փակցնելու առիթ պէտք է որոնեն:

Եվ այդպէս ցանկացած ոլորտում: Զորօրինակ, ՀՅԴ-ն տարիներ շարունակ երդուել է, որ կողմնակից է Հայաստանում ստեղծել հարիւր տոկոսանոց համամասնական ընտրակարգ: Սակայն հենց բանը հասաւ համապատասխան օրէնսդրական նախաձեռնութիւնը ԱԺ օրակարգ մտցնելուն, ՀՅԴ խմբակցութիւնը միանգամից դէմ եղաւ: Պարզ է, որ դա հետեւանք է հերթական քաղաքական առեւտրի եւ կոչուած է սպասարկելու այս րոպէական հատուածական շահը:

Պարզ է, որ 2007-ի ԱԺ ընտրութիւնների օրուայ մօտենալուն զուգընթաց հատուածական շահի գերակշռութիւնը գնալով աճելու է: Եւ դա վերաբերելու է ոչ միայն երկրի ներքին կեանքի բոլոր ոլորտներին, ուր հակամարտող իշխանական խմբաւորումները փորձելու են իւրաքանչիւրը վերմակն իր կողմը քաշել, այլեւ միջպետական յարաբերութիւնների ասպարէզին: Թէ ինչպիսի մանրիկ, բայց միաժամանակ յոյժ վտանգաւոր խաղերի է դա հանգեցնում, Արցախի ու Ջաւախքի մեր հայրենակիցների հետ կապուած խնդիրներում, արդէն տեսնում ենք: Եւ կարելի է պատկերացնել, թէ ուր դա կը հասցնի գերտէրութիւնների հետ յարաբերութիւններում, երբ յանուն այսրոպէական «դաբրոյի», խաղասեղանի վրայ կարող են դրուել պետութեան արմատական շահերը:

Սակայն, ինչպէս ասւում է, երկնակամարի տակ յաւերժ ոչինչ չկայ: Դա վերաբերում է եւ բացառապէս հատուածական շահով առաջնորդուող օլիգարխիկ վարչակրիմինալ ռեժիմին, որը հատուածական աբսուրդների տրամաբանութիւնը արդէն իսկ հասցրել է ծայրայեղութիւնների: Իսկ ծայրայեղութեան հասնողը, ինչպէս ցոյց է տալիս պատմութեան տրամաբանութիւնը, բաւականին արագ հասնում է իր վերջակէտին: Միայն թէ մնում է յուսալ, որ դէպքերի բերումով դա չի սպառնայ դառնալ բոլորիս վերջակէտ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԼԱՋԵԱՆ
«ԻՐԱՒՈՒՆՔ»

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

# «ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ՄԻԱՏԱՐՐ»

*ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»:«Ընդդիմութիւնը չի կարող միատարր լինել, ինչպէս եւ իշխանութիւնը: Ձեր աչքի առաջ իշխանութեան ներսում կատարւում են եւ կատարուեցին շատ լուրջ վերադասաւորումներ, մեղմ ասած: Ու դեռ շարունակուելու են», կարծում է Հայաստանի դեմկուսի ղեկավար Արամ Գասպարի Սարգսեանը, ով Հոկտեմբերի 21-ին եղել է Ազդակ ակումբի հիւրը: Սակայն իշխանութեան անմիատարրութեան խորացման շարունակականութեան մասին կանխատեսումով հանդերձ, Արամ Սարգսեանն առաւելապէս խօսել է ընդդիմութեան դաշտում հնարաւոր զարգացումների մասին:*

*«Ընդդիմութիւնը միատարր չէ այն պատճառով, որ նա գաղափարապէս տարաբնոյթ է: Իհարկէ, մենք շատ լաւ հասկանում ենք, որ այդ կուտը, որ իշխանութիւնը պարբերաբար գցում է մեր դէմ, թէ իբրեւ բոլորը միաւորուեն, միասնական ճակատ ստեղծեն իշխանութեան դէմ, դա հասկանալի է միանշանակ, թէ յանուն ինչի է արւում: Ժողովրդին միանգամից կ՚ասեն՝ տեսէք խնդրեմ, սա ՀՀՇ, սա Կոմունիստ, սա Սոցիալ-դեմոկրատ, սա չգիտեմ այսինչ, այնինչ, միացել են, միայն իշխանութիւն են ուզում», ասում է Արամ Սարգսեանը: Նա ասում է, թէ յամենայն դէպս իրենց կուսակցութեան եւ համակիրների համար իշխանութիւնն ինքնանպատակ չէ, այլ միջոց ծրագրերն իրականացնելու համար:*

*Այդ առումով Արամ Գասպարի Սարգսեանն ասում է, որ իրենք կարող են գնալ գաղափարական հենքով դաշինքների: Դեմկուսի ղեկավարի կարծիքով, պէտք է նպաստել գաղափարական դաշինքների ձեւաւորմանը, քանի որ «դա է ապագան»: Արամ Սարգսեանը նաեւ նշում է այն քաղաքական ուժերին,*



Հայաստանի դեմկուսի ղեկավար Արամ Գասպարի Սարգսեան

*որոնք կարող են լինել ՀԴԿ գաղափարական դաշնակից:*

*«Երեւի գաղտնիք չէ, որ մենք Արդարութիւն դաշինքում մնալու ենք մինչեւ վերջ: Մենք հիմա շատ լաւ համագործակցութիւն ենք իրականացնում, եղել է եւ հիմա էլ շարունակում ենք, ՍԻՄ-ի հետ եւ Ազգային Վերածնունդ կուսակցութեան հետ, ՀԺԿ հետ: Այնպէս որ, այդ համագործակցութիւնը կարող է եւ միտում ունի ընդլայնուելու եւ կարծում եմ, որ առաջիկայում մենք աւելի որոշակի հարցեր կ՚ունենանք Ձեզ ներկայացնելու: Եւ ընդհանրապէս, սոցիալ-դեմոկրատական ուղղուածութեան, ձախակենտրոն եւ կենտրոնամէտ ուժերի համագործակցութիւնը մեզ հետ, կամ մենք նրանց հետ, մենք չենք բացառում: Այսինքն այնպիսի համագործակցութիւնը, որը կարող է նաեւ դաշինքային յարաբերութիւններ ձեւաւորել եւ որի շնորհիւ մենք կարող ենք միասնական ծրագիր իրականացնել: Ինչ վերաբերում է այլ խնդիրներին, որոնք ունեն մեծ նշանակութիւն ազգի ու պետութեան համար, մենք պատրաստ ենք համագործակցել ցանկացած ուժի հետ, եթէ նրա հայեացքները համընկնում են մեզ հետ», ասում է Արամ Սարգսեանը:*

# ՀՀՇ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՉԻ ԲԱՑԱՌՈՒՄ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ 2008-Ի ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Նախկին իշխանական կուսակցութեան՝ Հայոց Համազգային շարժման (ՀՀՇ) բարձրաստիճան ներկայացուցչի կարծիքով, Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը որպէս թեկնածու կ՚առաջադրուի 2008 թուականի նախագահական ընտրութիւններում:*

*«Տէր-Պետրոսեանը, կարծում եմ, նախագահական ընտրութիւնների ժամանակ անպայման մասնակից կը լինի: Դա իմ կարծիքն է, բնականաբար: Համոզուած եմ՝ որպէս թեկնածու: Եւ սա ամբողջութեամբ կը փոխի այն իրավիճակը, որը առկայ է Հայաստանում», - լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ուրբաթ օրը ասաց ՀՀՇ վարչութեան նախագահ Արարատ Զուրաբեանը:*

*ՀՀՇ վարչութեան նախագահը հարկ համարեց մէկ անգամ էլ ընդգծել, որ դա իր անձնական տպաւորութիւնն է՝ յաւելելով, որ ՀՀՇ-ն, ամէն դէպքում, նախագահական ընտրութիւնների կը գնայ սեփական թեկնածուով:*

*Նա կրկնեց արդէն բազմիցս հնչեցուածը, թէ ընդդիմութեան հիմնական խնդիրը պէտք է լինի այն ճանապարհը գտնելը, որով կը յաջողուի ազատուել գործող վարչախմբից եւ «Թոյլ չտալ [իշխանութեան] վերարտադրութիւնը՝ լինի դա Վարդան Օսկանեան թէ Սերժ Սարգսեան տարբերակով»:*

*2007 թուականի խորհրդարանական ընտրութիւններին, ըստ Զուրաբեանի, 7 հազար անդամ ունեցող ՀՀՇ-ն կը մասնակցի, հաւանաբար, դաշինքով: Հնարաւոր դաշնակիցներից նշուեցին «Հանրապետութիւն» եւ Ազատական-առաջադիմական կուսակցութիւնները՝ չբացառելով համագործակցութիւնը «գործող վարչակազմի դէմ պայքարող որեւէ քաղաքական ուժի հետ»:*

# Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՀԱԳՆ ՉԱԽԱԼԵԱՆԻ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:Հոկտեմբեր, 23-ին Մ. Նալբանդեանի արձանի մօտ մամուլի ասուլիս էին հրաւիրել ի պաշտպանութիւն «Միասնական Ջաւախք» կազմակերպութեան անդամ Վահագն Չախալեանի կազմակերպուած նստացոյցի մասնակիցները:*

*Նրանք տեղեկացրեցին, որ նամակ են յղել ՀՀ նախագահին, ԱԺ նախագահին, վարչապետին, ՀՀ գլխաւոր դատախազին, ՀՀ Ազգային անվտանգութեան խորհրդի քարտուղարին, ՀՀ ԱԱԾ տնօրէնին, ՀՀ մարդու իրաւունքների պաշտպանին. ՀՀ եւ սփիւռքի հասարակական-քաղաքական ուժերին, ԶԼՄ-ներին՝ պահանջելով ազատ արձակել Վահագնին, որն իրենց կարծիքով ձերբակալուել է ապօրինի:*

*Յիշեցնենք, որ «Միասնական Ջաւախք» կազմակերպութեան անդամ Վահագն Չախալեանը ձերբակալուել էր Հոկտեմբերի 11-ին՝ Հայաստանի սահմանն անօրինական ճանապարհով անցնելու մեղադրանքով եւ դատապարտուել է երկու ամսուայ կալանքի:*

*«Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է եւ երկակի ստանդարտների կիրառումը, հայերի սորտաւորումը մեծ հարուած է հասցնելու հայութեան համախմբման գաղափարին ու ՀՀ իշխանութիւններին մեկուսացնելու է համահայկական գերնպատակից»,-ասուած է նամակում:*

*Հայ Արիական միաբանութեան երիտասարդական միութեան անդամ Էդգար Հելելեանի խօսքերով, արդէն այսօրուայ տուեալներով հաւաքուել է մօտ 800 ստորագրութիւն: Չնայած այս ամէնին, ինչպէս ասաց Էդգարը, որեւէ պատասխանատու իշխանաւոր պատիւ չի համարել իրենց այցելելու եւ բանակցելու, եւ իրենք նման անտարբեր վերաբերմունքի շարունակականութեան դէպքում պատրաստ են անցնել սահմանադրական բողոքի այլ եղանակների՝ ընդհուպ երթերի ու հանրահաւաքների կազմակերպում:*

# ՎԱԶԳԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ. «ՄԵՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԸ ՉԵՆՔ»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի առաջին արտգործնախարար Րաֆֆի Յովհաննիսեանի հետ միասին Հայաստանում քաղաքացիական հասարակութեանն արթնացնելուն միտուած քաղաքացիական շարժում նախաձեռնած Հայաստանի նախկին վարչապետ, ԱԺՄ նախագահ Վազգէն Մանուկեանի ներկայացմամբ, շարժման նպատակն այն է, որ «քաղաքացիները դառնան երկրի տէրը»:*

*«Ես կարծում եմ, որ եւ Րաֆֆի Յովհաննիսեանի, եւ իմ անցած ուղին, այն, որ մենք 15 տարուց աւելի միշտ երեւում ենք քաղաքականութեան մէջ, առաջացնում է որոշակի վստահութեան մթնոլորտ, որի միջոցով հնարաւոր կը լինի հաւաքել մեր հասարակութեանը», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Վազգէն Մանուկեանը: - «Բայց մենք [մեզ] սեփականատէրը չենք զգում այդ շարժման: Մենք նախաձեռնում ենք»:*

*«Մենք կ՚ուզենանք, որ յետոյ ոչ թէ կուսակցական ինչ-որ հիերարխիկ համակարգ լինի», - շարունակեց ԱԺՄ նախագահը: - «Մենք ուզում ենք, որ քաղաքացիները դառնան երկրի տէրը»:*

*Այսօրուայ պայմաններում ընտրական գործընթացը, Մանուկեանի բնորոշմամբ, Հայաստանում յանգում է «իշխանութիւնների դէմ, խունժանութիւնների դէմ» պայքարին եւ բերում է պարտութեան՝ «ոչ թէ իրական քուէներով, այլ արդիւնքով»:*

*«Ենթադրենք, 2007, 2008 թուի ընտրութիւնների ժամանակ տեղի ունեցաւ իշխանափոխութիւն», - շարունակեց նա: - «Էլի կասկածը մնում է, որ իշխանութիւնն արդէն կը պատկանի այն մարդկանց, ովքեր վերցրեցին այդ իշխանութիւնը: Նորից ժողովրդին չի պատկանում»:*

*«Այդ շարժումը, որ մենք ուզում ենք ստեղծել, դա մնայուն մի բան է... Կամաց-կամաց Հայաստանում պէտք է քաղաքացիների գիտակցութեամբ, համակարգային փոփոխութիւններով, ինքնակազմակերպման նոր ձեւերով հասարակութիւնը կարողանայ վերահսկել իշխանութեանը նաեւ ընտրութիւններից ընտրութիւն ընկած ժամանակաշրջանում», - եզրափակեց Մանուկեանը:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐՀՆԵՐԳԻ ՄՐՑՈՅԹՈՒՄ ՅԱՂԹԵԼ Է ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի նոր օրհներգի համար յայտարարուած մրցոյթում յաղթող է ճանաչուել Արամ Խաչատրեանի երաժշտութիւնը, որը որպէս հիմն հնչել է խորհրդային տարիներին:*

*Մրցութային յանձնաժողովը որոշել է դիմել կառավարութեանը՝ Արամ Խաչատրեանի երաժշտութեան տեքստի համար առանձին մրցոյթ յայտարարելու խնդրանքով:*

*Շաբաթ օրը կայացած քուէարկութեան արդիւնքում Արամ Խաչատրեանի երաժշտութիւնը ստացել է 15 ձայն, Ռոբերդ Ամիրխանեանի երաժշտութիւնը՝ մէկ ձայն, եւ մէկ քուէաթերթիկ անվաւեր է ճանաչուել: Ըստ «Ազատութիւն» ռադիոկայանի հաւաստի տուեալների՝ անվաւեր ճանաչուած քուէաթերթիկը լրացրած անդամը նոյնպէս քուէարկել է Արամ Խաչատրեանի երաժշտութեան օգտին:*

*Երկու ամիս առաջ՝ մրցոյթի առաջին փուլում, մրցութային յանձնաժողովի անդամների մեծամասնութիւնը ձայնը տուել էր Տիգրան Մանսուրեանի երաժշտութեանը, որը շաբաթ օրը որեւէ ձայն չի ստացել:*

*Մասնագէտները խիստ տարօրինակ են համարում յանձնաժողովի անդամների նման «առեղծուածային մտափոխութիւնը»:*

*Տարակուսանք է հարուցում նաեւ այն հանգամանքը, որ Արամ Խաչատրեանի երաժշտութիւնը երկրորդ փուլ էր անցել Արսէն Սողոմոնեանի բառերով, մինչդեռ շաբաթ օրը յանձնաժողովը յաղթող էր ճանաչել միայն երաժշտութիւնը՝ առանց Սողոմոնեանի տեքստի:*

*Փորձագէտները չեն բացառում, որ տուեալ դէպքում դեր է խաղացել յանձնաժողովի նախկին անդամ Դաւիթ Յովհաննէսի՝ մէկ ամիս առաջ արուած յայտարարութիւնը, թէ Արսէն Սողոմոնեանը մշակոյթի նախարարութեան վարչութիւններից մեկի պետն է:*

*Արամ Խաչատրեանի երաժշտութիւնը որպէս օրհներգ ընդունելու յանձնաժողովի առաջարկը պէտք է քննարկուի Ազգային ժողովում, որտեղ Դաշնակցութիւնն արդէն օրինագիծ է ներկայացրել գործող օրհներգը՝ «Մեր Հայրենիք»-ը, ուժի մէջ թողնելու վերաբերեալ:*

## ԼՈՒՐԵՐ

# Ս.Դ.Հ.Կ. «ՍԱՐԳԻՍ ՏԽՐՈՒՆԻ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՇԽՈՅԺ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ



Հնչակեան երիտասարդներու ընկերակցութեամբ պատանի ուսանողները կ'այցելեն Եռաբլուր

Ս.Դ. Հնչական Կուսակցութեան Երեւանի նորակազմ «Սարգիս Տխրունի» ուսանողական-երիտասարդական միութիւնը կը շարունակէ ծաւալել աշխոյժ գործունէութիւն: Երիտասարդական հարցերու նուիրուած սեմինար, երախտագիտութեան ցոյց Ֆրանսայի դեսպանատան առջեւ, Թրքական արտադրութեան ապրանքները պոյքոթելու կոչ, Պատմութեան Թանգարանի տարածքի մաքրութեան աշխատանքներ, անցնող մէկ ամսուայ ընթացքին հայաստանեան մամուլը լայնօրէն անդրադարձաւ այս բոլորին:

Միութիւնը այժմ լծուած է դպրոցներու հետ լայնածաւալ աշխատանքներու: Ամէն Երկուշաբթի, Հնչակեան երիտասարդները կը մտնեն դպրոցներ, 3-4 դասարաններու ուսանողներուն համար կազմակերպելով հայրենասիրական եւ ազգային ազատագրական պայքարի մասին դասընթացքներ, որոնց ընթացքին կը խօսուի Հայ Դատի լուծման եղանակներու եւ Արցախի հիմնահարցի մասին: Այնուհետեւ շաբթուայ վերջը, միութեան երիտասարդները, երեխաներու հետ միասին կը բարձրանան Եռաբլուր, ուր տեղի կ'ունենայ բացօթեայ դասընթացք:

# ԵԻՐԱՄԻՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՉՇԱՀԱՐԿԵԼ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԻԾԸ ԽՕՍՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐՆ ԱՐԴԱՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Թուրքիան պէտք է ձեռնպահ մնայ Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ ֆրանսիական խորհրդարանի ընդունած օրինագիծը որպէս երկրի ներսում խօսքի ազատութեան սահմանափակումները պահպանելու արդարացում օգտագործելուց», - յայտարարել է Անգարայում Եւրամիութեան ներկայացուցիչ Հանսյոց Քրեչմերը [sic: Հանսեորգ Քրեչմերը]:

«Ռոյթերզ» գործակալութեանը տուած հարցազրոյցում Քրեչմերն ընդգծել է, որ «ֆրանսիական օրինագիծն արգելում է կոնկրետ մէկ յայտարարութիւն անելը, այսինքն՝ թէ ցեղասպանութիւն չի եղել, մինչդեռ [Թուրքիայի քրէական օրէնսգրքի] 301-րդ յօդուածը օգտագործւում է հիմնական քաղաքական հարցերով հրապարակային բանավէճերը կանխելու համար»:

Թուրք քաղաքական գործիչներից ոմանք պնդում են, թէ Հայոց Ցեղասպանութեան ժխտման համար քրէական պատիժ սահմանող օրինագծի ընդունումը Ֆրանսիայի Ազգային Ժողովի կողմից Եւրամիութեանը զրկում է Անգարայից բարեփոխումներ պահանջելու իրաւունքից: Մասնաւորապէս, նրանց համոզմամբ, Եւրամիութիւնը բարոյական իրաւունք չունի պահանջել Թուրքիայի քրէական օրէնսգրքի 301-րդ յօդուածի վերացումը կամ փոփոխումը, որով քրէական պատիժ է նախատեսուած «Թուրքական ինքնութիւնը վիրաւորելու» համար:

Յիշեալ յօդուածով դատարանի առջեւ են կանգնել մի շարք Թուրք մտաւորականներ, այդ թւում գրականութեան բնագաւառում այս տարուայ Նոպէլեան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկը, գրող Էլիֆ Շաֆաքը, Իսթանպուլի «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանդ Դինքը:

# ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՈՎ՝ ՆՈՊԷԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ ՎԱՐՁԱՎՃԱՐ ԷՐ ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒԿԻՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԴԻՄԱՑ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Թուրք ազգայնական մտաւորականները համոզուած են, որ յայտնի գրող Օրհան Փամուկին շնորհուած Նոպէլեան մրցանակը Արեւմուտքի վարձավճարն է Հայոց ցեղասպանութեան ճանաչման դիմաց:

Ազգայնական եւ ձախակողմեան հայեացքներ դաւանող մօտ 80 Թուրք մտաւորականներ յայտարարել են, թէ «Նոպէլեան մրցանակը ոչ թէ Թուրք գրականութեանը շնորհուած պարգեւ է, այլ վարձավճար Օրհան Փամուկին»:

Յայտարարութեան հեղինակները պնդում են, որ «քանզի մրցանակ շնորհողները հնարաւորութիւն չունեն ընթերցելու բոլոր գրքերը աշխարհի բոլոր լեզուներով, գրականութեան բնագաւառում Նոպէլեան մրցանակը գրական արժէքները գնահատող պարգեւից վերածուել է իմպերիալիզմի կողմից շահագործուող հասարակութիւնները մոլորութեան մէջ գցելու գործիքի»:

«Ֆրանսփրես» գործակալութիւնը փաստում է, որ թէեւ Թուրքիայի կառավարութիւնը եւ գրական շրջանակները ողջունել են Նոպէլեան մրցանակի շնորհումը Օրհան Փամուկին, թերահաւատները պնդում են, որ Արեւմուտքը աջակցում է նրան ոչ թէ իր գրական վաստակի, այլ սեփական երկիրը քննադատելու համար:

# ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ 78% ՉԻ ՀԱՒԱՏՈՒՄ ՈՐ Կ'ԱՆՑԿԱՑՈՒԵՆ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) պատուէրով եւ ԱՄՆ ՄԶԳ- ֆինանսաւորմամբ հեղինակաւոր «Կելոփ» կազմակերպութիւնը ինֆորմացիայի ստացման եւ ընտրութիւնների վերաբերեալ սոցիոլոգիական հարցումներ է անցկացրել: Ըստ հրապարակուած արդիւնքների՝ Հայաստանի Հանրապետութեան բնակչութեան 10%-ը քաղաքական կուսակցութիւնների անդամ է: Այսինքն՝ վերջին մարդահամարի արդիւնքների հաշուարկով, երկրի բոլոր կուսակցութիւնները միասին ունեն 320 հազար անդամ:

ՄՀԻ տուեալներով՝ Հայաստանի բնակչութեան համար ինֆորմացիայի ստացման հիմնական աղբիւրը հեռուստատեսութիւնն է՝ 97%, հարցուածների 32%-ը տեղեկատուութիւն ստանում է ռադիոյով, մամուլից կամ ծանօթներից, մօտ 10%-ի համար ինֆորմացիայի աղբիւր են նաեւ միտինգները, ինտերնետը, գործընկերները կամ ամսագրերը:

Նախընտրական շրջանում թեկնածուների պատրաստած բրոշիւրները կամ ծանուցագրերը համարեա ընտրողի վրայ չեն ազդում: Հարցուածների գերակշիռ մասը վստահեցրել է, որ իր կողմնորոշման հարցում լուրջ դեր են խաղում նախընտրական հանդիպումները: Իսկ հեռուստատեսային կամ ռադիօ գովազդը, փողոցի պաստառները, հեռախօսազանգերը կամ որոշ երկրներում կիրառուող այլ մեթոտները հայ ընտրողին բացարձակապէս չեն կողմնորոշում:

«Կելոփ»-ի հարցաթերթիկներում քաղաքացիների 14%-ը նշել է, որ հաւատում է արդար ու ազնիւ ընտրութիւնների:

ՀՀ քաղաքացիներ հանդիսացող ընտրողների գերակշռող մեծամասնութիւնը՝ 78%, պնդել է, որ չի հաւատում, թէ իր երկրում արդար ընտրութիւններ կ'անցկացուեն:

# ԸՍՏ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՄԱՆ ՀԱՐՑԸ ՕՐԱԿԱՐԳԻ ՎՐԱՅ Է

Շարունակուած էջ 1-էն

Մարտունիի շրջաններու հարցը:

Հայաստանի Արտաքին Գործոց նախարարը յայտնած է որ, ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահները ներկայացուցած են նոր միտքեր եւ այդ միտքերն է որ քննարկուած են Հոկտեմբեր 24-ին Փարիզի մէջ իր ու Ատրպէյճանցի իր պաշտօնակից Էլմար Մամեդեարովի միջեւ կայացած հանդիպման ընթացքին: Փարիզի մէջ երկու նախարարները ներկայացուցած են այդ նոր միտքերու վերաբերեալ իրենց դիրքորոշումները: Հայաստանը ներկայացուցած է նաեւ Ղարաբաղի դիրքորոշումը:

Օսկանեան Փարիզ մեկնելէ առաջ այցելելով Ստեփանակերտ ծանօթացած էր 78 Ղարաբաղի ղեկավարութեան տեսակէտներուն:

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ՄՏԱՀՈԳՈՒԱԾ ԵՆ

Շարունակուած էջ 1-էն

գործադրէք ձեր կառավարութեան նկատմամբ, որպէսզի ընտրութիւններու օրը որոշուելէ եւ այդ մասին յայտարարուելէ անմիջապէս յետոյ հրաւէր ուղարկեն», - լրագրողներուն յայտնեց ԵԱՀԿ-ի Միացեալ Նահանգներու դեսպանը:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի մը ընթացքին Ճուլիա Ֆինլի դժգոհութիւն յայտնած է նաեւ այն կապակցութեամբ, որ Ռոբերդ Քոչարեան մերժած է հանդիպիլ իր հետ: Պաշտօնական պատճառաբանութիւնը եղած է այն, թէ նախագահի ժամանակացոյցը «լրացած էր»:

Քոչարեանի մամուլի քարտուղար Վիկտոր Սողոմոնեանին երբ այս մասին հարց տրուած է, ան պարզապէս ըսած է,- «Զեմ ցանկանում մեկնաբանել»:

# ԼԱՐՔ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՇԱԿԵՐՏ ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻ ԲԱՑՈՒՄԸ

Շարունակուած էջ 1-էն

կերակցութեան շրջանակէն ներս գործող խումբ նուիրեալներու ու անոր հիմնադիր առաջնորդ Վաչէ Պարսումեանի տարիներ փայփայած երազը՝ դարձուցին թանձրացեալ իրականութիւն մշակոյթի ամսուան այս բարեբաստիկ առիթով: Իրենց այս երախտաշատ հոգեկցութեամբ, անոնք բաջալեր հանդիսացան Լարք Ընկերակցութեան ու անոր տաղանդաշատ առաջնորդ՝ մեծավաստակ երաժիշտ՝ Վաչէ Պարսումեանին, որ հետեւողական ու անխոնջ՝ պիտի շարունակէ իր աւանդական բարձրարուեստ ծառայութիւնը հանդէպ հայապահպանման՝ մեր սրբազան զուպարին, հայ մշակոյթի ճանապարհով: Բայց այսուհետեւ՝ իր սեփական կալուածին վրայ, եւ առանց դոյզն մտահոգութեան, որ ինչ-ինչ հաշիւներով, չար մարդիկ, կրնան անոր էն պարպել իր տունը օրին մէկը:

Վարձքը կատար բոլոր անոնց որոնք կանգնեցին մշակոյթի նոր օճախ մը:

## ԱԶԳԱՅԻՆ

# «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՈՒՂԻՂ ԶՐՈՅՑԸ ՀՀ ԱԳ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻ ՀԵՏ

Նիկոլ Փաշինեան - Պարոն Օսկանեան, ինձ շատ հետաքրքրեց 2006 թուականի Յունուարի 12-ին ձեր արած մի յայտարարութիւնը, որ վերաբերում է 2007 թուականի խորհրդարանական ընտրութիւններին: Դուք ասել էք, որ 2007 թուականի ընտրութիւնները նորմալ կ'անցնեն, քանի որ բազմակուսակցական ընտրութիւններ են լինելու, եւ իւրաքանչիւր ուժ պայքարելու է իւրաքանչիւր ձայնի համար, եւ տեղի է ունենալու փոխադարձ վերահսկողութիւն: Ես ճի՞շտ եմ հասկանում, որ դուք էլ շատ-շատերի նման ընտրութիւն ասելով՝ հասկանում էք քուէարկութեան պրոցէսը: Աւելի պարզաբանեմ հարցս. ինչքանո՞վ կարող են 2007 թուականի ընտրութիւնները այսօրուայ հայեցքով արդէն դիտարկուել նորմալ, այն դէպքում, երբ օրուայ ցանկացած ժամի հեռուստացոյցը միացնում ես՝ գովաբանում են Գագիկ Ծառուկեանին, ցոյց են տալիս, թէ ինչպէս է նա ցորեն ու տուկի թել բաժանում, ցոյց են տալիս Սերժ Սարգսեանին եւ գովաբանում: Այդ շնորհից ձեզ էլ է որոշակի բաժին հասնում: Այսինքն, տեղի է ունենում իշխանական անձերի տոտալ քարոզչութիւն, ընդ որում, ոչ թէ գործունէութեան լուսաբանում, այլ քարոզչութիւն:

***Վարդան Օսկանեան -*** *Նախ՝ առաջին մասով. ես երբեւէ այդքան վստահ չէի կարող ասել, երբեւէ ասել եմ, որ յոյս ունեմ, որ ամէն ինչը նորմալ կը լինի, որովհետեւ պէտք է ապրել եւ տեսնել: Ուղղակի քաղաքական ուժերի դասաւորումը, նոր Սահմանադրութիւնը, այդ բոլորն այնպիսի մի մթնոլորտ են ստեղծում, որ իսկապէս այդ պայքարը ընտրութեան օրը լինելու է: Այդ առումով, ես որոշ լաւատեսութիւն ունեմ, որ կարող է նախորդներից տարբերուել: Դուք բոլորովին այլ խնդիր էք դնում, մինչեւ ընտրութիւնները...*

Ն.Փ. - կը ներէք, ես բոլորովին այլ խնդիր չեմ դնում. ես ուղղակի չեմ ուզում, որ ընտրութիւն ասելով՝ հասկանանք մի քանի օրուայ պրոցէս, որովհետեւ Արեւմուտքում ընդունուած ձեւակերպում կայ, որ ընտրութիւնը, ըստ էութեան, երբեք չի աւարտւում: Այսօրուայ մեր իրականութիւնը նոյնպէս ընտրութեան պրոցէս է:

***Վ.Օ. -*** *Մեզ մօտ ժողովրդավարութիւնը իսկապէս քայլ առ քայլ է զարգանում՝ մի քայլ առաջ, մի քայլ ետ, երբեմն՝ մէկ քայլ առաջ, երկու քայլ ետ, դա էլ է լինում, խնդիր չկայ, ես ընդունում եմ այդ բոլորը: Դրա համար ակնկալել, որ ընտրութիւններից ութ ամիս առաջ մեզ մօտ ամէն ինչ պէտք է իտէալական լինի, երբեւէ մենք մեզ խաբած կը լինենք, որովհետեւ դա չի լինելու: Իհարկէ, իշխանութեան ղեկին գտնուողների համար մամուլում երեւալու հնարաւորութիւնը շատ աւելի մեծ է, որովհետեւ նրանք գործունէութիւն են վարում, եւ մամուլը նրանց գործունէութեանը անդրադառնում է: Ես կողմ կը լինեմ իսկապէս, որ ըստ սահմանուած օրէնքի, երբ որ պաշտօնապէս սկսւում է ընտրարշաւը, լրատուական դաշտը բոլորի համար հաւասար կը լինի, եւ մենք ընտրութեան օրը կարողանանք նորմալ ընտրութիւններ անել: Այս ընտրութիւնների համար ես դրանով էլ գոհ կը լինեմ: Յետոյ կարելի է մտածել յաջորդ տարուայ, յաջորդ տասնամեակի մասին: Բայց հաշուի առնելով մեր պատմութիւնը, հաշուի առնելով այսօր Հայաստանում իրավիճակը, հաշուի առնելով, որ մեզ մօտ իսկապէս քայլ առ քայլ է ամէն ինչ արւում, ես նորից եմ կրկնում, բաւարարուած կը լինեմ, եթէ քարոզարշաւի այդ մի ամիսը բոլորի համար հաւասար իրաւական եւ լրատուական դաշտ ստեղծուի, որպէսզի բոլորը կարողանան իրենց դրսեւորել:*

Ն.Փ. - Համաձայն եմ, բայց մենք պէտք է հասկանանք մի խնդիր: Դուք ասացիք, որ ամէն ինչ քայլ առ քայլ է արւում, որը նորմալ է: Եթէ մենք մինչեւ ընտրութիւնների օրը պէտք է անենք, օրինակ, հարիւր քայլ, այսօր արդէն պէտք է տասը քայլ արած լինենք: Մենք պէտք է ստուգենք, թէ այդ տասը քայլի մէջ ինչքանո՞վ է մեր գործողութիւնների վեկտորը համապատասխանում մեր առաջադրած նպատակին: Ընտրարշաւի ընթացքում ինչքան պիտի միւս պոտենցիալ ընդդիմադիրները ցորեն բաժանեն (նրանք երեւի չունեն էլ ցորեն, որ բաժանեն), հեռուստացոյցի էկրանին երեւան, որպէսզի տեղի ունենայ քարոզչական հաւասարակշռութիւն: Նորմալ ընտրութիւն՝ նշանակում է, որ հանրութիւնը տեղեկանայ, թէ ինչ տեսակէտներ կան երկրում: Այսօր բոլոր հեռուստաընկերութիւնները մատուցում են միմիայն մի տեսակէտ, որը, այսպէս ասած, «դաբրո» է ստացել նախագահի աշխատակազմից: Ուզում եմ ասել՝ քայլ առ քայլ կը գնանք, վերջում դուք էլի կ'ասէք՝ վայ, էլի չստացուեց, յոյս ունենք՝ յաջորդ անգամ աւելի լաւ կը լինի:

***Վ.Օ. -*** *Իհարկէ, պրոբլեմները մեզ մօտ իսկապէս շատ են, բայց ես չեմ ուզում նաեւ, որ միւս ծայրայեղութեան մէջ ընկնենք: Նաեւ պէտք է նայել, թէ ընդդիմութեանը ինչքան հնարաւորութիւն է տրւում մեր հեռուստատեսութեան եթերում: Երբ ես հեռուստատեսութիւն եմ նայում, նաեւ տեսնում եմ ընդդիմութեան դէմքեր, որոնք խօսում են, խնդիրներ են դնում, որը ինձ ուրախացնում է, որովհետեւ այդ դաշտի բալանսաւորուած լինելը՝ քիչ թէ շատ, իսկապէս կարեւոր է: Բայց միւս մասով, որպէս լրատուութիւն՝ միգուցէ շատ բան իրօք չափազանցուած է ներկայացւում, որովհետեւ ոչ բոլոր լուրերն են լուրեր: Ես կոնկրետ հիմա չեմ կարող օրինակներ տալ՝ ցորեն բաժանել եւ այլն, չեմ ուզում էլի մտնել այդ դաշտը, որեւէ մէկին քննադատել, բայց նաեւ մեզ մօտ դեռեւս լրատուական կուլտուրան ամբողջական չի ձեւաւորուել: Ով ասես մամուլի ասուլիս է տալիս, բոլորը վազում են, եւ երեկոյեան եթերում տալիս են ահագին ծաւալուն՝ անկախ նրանից, թէ այդ մարդու ասածը արժէք ներկայացնո՞ւմ է, թէ՞ ոչ:*

Ն.Փ. - Ո՞նց ենք որոշում՝ արժէք ներկայացնո՞ւմ է, թէ՞ ոչ. բաժանուած ցորենի ծաւալո՞վ:

***Վ.Օ. -*** *Չէ, դա մամուլը, լրատուական դաշտը ինքը պէտք է որոշի:*

Ն.Փ. - Լրատուական դաշտը որոշում է, որ Սերժ Սարգսեանից արժէքաւոր մարդ Հայաստանում չկայ, այսինքն, եթէ այդպէս ենք դնում խնդիրը, նշանակում է, որ մենք հենց այսօրուանից արձանագրենք, թէ Սերժ Սարգսեանը ամենաարժանաւորն է, եւ փակենք ընտրութիւնների թեման ու բոլորս համաձայնենք եւ այդ համաձայնութեան ֆոնին չդիմադրենք, որ ինքը ազատ, արդար ընտրութիւններով դառնայ...

***Վ.Օ. -*** *Եթէ ամբողջ լրատուական դաշտի վրայ պարտադրուած է ինչ-որ մի անձ, այդ ժամանակ, ես 100 տոկոս կողմնակից եմ, որ դա լուրջ պրոբլեմ է: Բայց ես չեմ կարող պատկերացնել, որ այսօր կենտրոնից ամբողջ լրատուական դաշտին ինչ-որ բան է պարտադրւում: Որոշների վրայ՝ միգուցէ՝ այո, որոշների վրայ՝ ոչ:*

Ն.Փ. - Իսկ ինչպէ՞ս է լինում, որ, օրինակ, Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովը բոլոր հեռուստաընկերութիւնները լուսաբանում են գրեթէ միեւնոյն բառապաշարով:

***Վ.Օ. -*** *Գոնէ այդ մասով ես կարող եմ հարիւր տոկոս վստահեցնել, որ որեւէ կենտրոնացուած աշխատանք չի եղել, որովհետեւ եթէ դա արուէր, մենք պէտք է անէինք, որովհետեւ այդ ամբողջ նախաձեռնութիւնը արտաքին գործերի նախարարութեանն էր: Մենք հաղորդագրութիւններ ենք տարածել, եւ եթէ դրանից են օգտուել եւ այդ բառապաշարն են օգտագործել, համաչափութիւնը կարող է...*

Ն.Փ. - Խօսքը միայն բառապաշարի մասին չէ, խօսքը ռիտորիկայի, շեշտադրումների մասին է:

***Վ.Օ. -*** *Բայց դա չորս տարին մէկ կատարուող կարեւոր իրադարձութիւն է. Սփիւռքից երկու հազար մարդ է եկել, եւ որոշում է կայացուել, նոյնիսկ ես չեմ խնդրել, որ «Նոր ալիքը» ամբողջ մէկուկէս, երկու օրը ուղիղ եթեր տայ: Դա իրենց որոշումն է եղել, նոյնիսկ ես չեմ խնդրել, որ դա լինի, որովհետեւ համարել են, որ սա կարեւոր իրադարձութիւն է, Հայաստան-Սփիւռքը ամէն տարի չի լինում, երեքչորս տարին մէկ է, եւ երեւի թէ դրա համար էլ ծաւալուն են տուել: Նախագահն է մասնակցել, երկու կաթողիկոսները:*

Ն.Փ. - Իհարկէ, նորմալ է, որ ծաւալուն են անդրադարձել, մենք էլ ենք ծաւալուն անդրադարձել: Բայց հեռուստաընկերութիւնները ոչ միայն ծաւալուն են անդրադարձել, այլեւ՝ միեւնոյն բառապաշարով, նոյն շեշտադրումով:

***Վ.Օ. -*** *Գոնէ այդ մասով ես կարող եմ վստահեցնել, որ որեւէ աշխատանք չի տարուել, որ ինչ-որ բան թելադրենք: Ես մէկ-երկու ասուլիս եմ տուել՝ հենց այնտեղ, ոտքի վրայ, հաղորդագրութիւններ ենք տուել, երեւի թէ դրանով են առաջնորդուել: Երեւի իմ ամփոփիչ ելոյթը...*

Ն.Փ. - Ամբողջ խնդիրն այն է, որ երկրում ամէն ինչ ի սկզբանէ ծրագրաւորուած ռեժիմով է գնում, եւ շատ պարագաներում ուղղակի հրահանգաւորելու խնդիր չկայ, այսինքն՝ հրահանգը տրուած է ի սկզբանէ, երբ որ ազատ հեռուստաընկերութիւնները փակուել են, եւ բացուել են նոր հեռուստաընկերութիւններ, որոնց միակ խնդիրը յաճախականութիւն զբաղեցնելն է, հրահանգը դրուած է այստեղ, եւ դուք գիտէք, որ այդ հրահանգը կայ: Էլ չեմ ասում, որ նախագահի խօսնակը ամէն օր հեռուստաընկերութիւններին հրահանգում է, թէ ում պէտք է հաղորդման հիւր հրաւիրել, որ թերթից ինչ հրապարակում է պէտք կարդալ եթերում եւ այլն, եւ այլն: Գիտէ՞ք, մեր պրոբլեմն այն է, որ մենք բոլորս գիտենք ինչ-որ ճշմարտութիւններ, բայց երբ դէմ դիմաց ինչ-որ հարց ենք քննարկում, մենք խուսափում ենք այդ ճշմարտութիւնների մասին խօսելուց, խօսքը կտուրն ենք գցում: Սա

*Շար.ը էջ 6*






## ԱԶԳԱՅԻՆ

# «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՈՒՂԻՂ ԶՐՈՅՑԸ ՀՀ ԱԳ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻ ՀԵՏ

*Շարունակուածէջ 5-էն*

վկայում է ընդամէնը մէկ բանի մասին, որ երբ խօսում ենք ազատ ընտրութիւնների մասին, մենք ընդամէնը դրանով փորձում ենք հանրային զգօնութիւնը բթացնել եւ ստեղծել ինչ-որ արտաքին տպաւորութիւն: Հիմա կոնկրետ հարց, ո՞վ է լինելու 2007 թուականի ընտրութիւնների պատասխանատուն՝ ազատ, արդար ընտրութիւնների պատասխանատուն. կա՞յ այդպիսի մէկը:

*Վ.Օ. - Գիտէ՞ք, ես կարծում եմ, որ դա բոլոր քաղաքական ուժերի պատասխանատուութիւնն է, բայց սա իսկապէս իմ կողմից հերթական յայտարարութիւն մի համարէք, բայց ես կարծում եմ, որ առաջին հերթին ժողովուրդը պէտք է լինի պատասխանատուն: Մենք յաջորդ ընտրութիւններին չպէտք է հանդուրժենք խախտումները: Ես սրա մասին էլի եմ ասել, հիմա էլ կրկնում եմ եւ երբեք չեմ գլանալու ասել՝ ժողովուրդը պահանջատէր պէտք է լինի իր իրաւունքներին, որովհետեւ իւրաքանչիւր ընտրութիւն մեզ համար պատմական առիթ է. բայց յաջորդ երկու ընտրութիւնները առաւել մեծ պատմական առիթ են: Եթէ մենք չկարողացանք ճիշդ ընտրութիւն անել, խնդիրները ճիշդ չդրեցինք, քաղաքական ուժերին չպարտադրեցինք, որ այդ հարցերին պատասխան տան, դրանք դարձնեն իրենց օրակարգային հարց եւ նաեւ ցոյց տան, որ իրենք ի վիճակի են այդ հարցերին անդրադառնալ, նրանք ընտրուելու բարոյական իրաւունք չպէտք է ունենան: Եւ ժողովուրդը, վերջիվերջոյ, պէտք է կարողանայ տէր կանգնել իր քուէարկութեանը:*

Ն.Փ. - Ես հիմա լսում եմ ձեզ, պարոն Օսկանեան, եւ տպաւորութիւնն այսպիսին է. ոնց որ ընդդիմութիւնը ամէն անգամ խոստանում է իշխանափոխութիւն, այնպէս էլ իշխանութիւնը՝ կոնկրետ դուք, ամէն անգամ խոստանում է, որ ընտրութիւնները լաւը կը լինեն, եւ ամէն անգամ ասւում է, որ եթէ վատ լինեն ընտրութիւնները, դա մեզ վրայ շատ ծանր կը նստի: Ես էլ ասում եմ, որ դա բացարձակապէս մեզ վրայ «ծանր չի նստի», այն իմաստով, որ եթէ ծանր նստելու լինէր, այդպէս կը լինէր նախորդ բոլոր ընտրութիւններից յետոյ: Իսկ ի՞նչ է պատահել. նորից ընտրութիւնները կը կեղծուեն, նորից կը գայ Ագոյի խումբը, դուք նորից իրենց կը հաւաստիացնէք, որ դուք ամէն ինչ կ՚անէք, Ընտրական Օրէնսգրքում փոփոխութիւններ կ՚անէք, որ մեր մենթալիտետը մի քիչ էն չէ, որ մենթալիտետի ուղղութեամբ կ՚աշխատէք, կ՚անցնի-կը գնայ: Ես ամենեւին վտանգ չեմ տեսնում, այնպէս որ, կարելի է ազատ կեղծել եւ ոչ մի պրոբլեմ չունենալ:

*Վ.Օ. - Ես կարծում եմ, որ այս անգամ շատ ծանր կը լինի:*

Ն.Փ. - Գուցէ դուք այս անգամ աւելի ցաւոտ էք վերաբերւում այդ պրոբլեմին, որովհետեւ, օրինակ, եթէ ընտրութիւնների արդիւնքում յաղթի իշխանական կլաններից այն մէկը, դուք այլեւս կարող էք ԱԳ նախարար չլինել: Եւ այդ դէպքում ձեր մտահոգութիւնը շատ աւելի հասկանալի է դառնում, որովհետեւ նոյն վտանգները...

*Վ.Օ. - Ընտրութիւնների օրը իմ նախարարութեան տասը տարին կը լինի, եւ հաւատացէք՝ ինձ տասը տարուց աւել նախարար լինելը ճիշդ չի լինի, եւ ես կարող եմ վստահ ասել, որ ԱԳ նախարարը տասը տարի անց պէտք է փոխուի, եւ նոր մարդ լինի: Այնպէս որ, ես այս պաշտօնի վրայ մնալու որեւէ ձգտում չունեմ:*

Ն.Փ. - Դուք նկատի ունէք, որ ձեր նախագահի դառնալու ժամանակն է, հա՞:

*Վ.Օ. - Ոչ, ես այդպիսի բան չասացի, ես դեռ չեմ որոշել, թէ իմ յաջորդ անելիքները ինչ կը լինեն, բայց մնալ նախարար նաեւ յաջորդ հինգ տարին՝ ես կարծում եմ, որ դա ճիշդ չի լինի:*

Ն.Փ. - Ես հիմա ձեր խօսքերի տակ հասկանում եմ, որ դուք շատ աւելի նպատակայարմար էք դիտում յաջորդ հինգ տարում լինել նախագահ:

*Վ.Օ. - Բայց եթէ ինձ ասէք, թէ որ խօսքի վրայ այդ եզրակացութեանը հանգեցիք, կ՚ասեմ՝ ճի՞շտ էք, թէ՞ չէ, բայց որովհետեւ չեմ որոշել՝ չի կարող նաեւ ենթատեքստում նման բան դուրս գալ, առաւել եւս ես վստահ եմ, որ իմ ասածից նման բան հնարաւոր չէ եզրակացնել: Ես այս պահի դրութեամբ չեմ որոշել, թէ իմ յաջորդ անելիքները խորհրդարանական ընտրութիւններից յետոյ ի՞նչ են լինելու: Չեմ որոշել, որովհետեւ այսօր քաղաքական դաշտը շատ յեղյեղուկ է, պէտք է սպասել, տեսնել՝ ինչպիսի զարգացումներ կը լինեն, ես իմ դերը այդ նոր զարգացումների մէջ կ՚որոշեմ, թէ ի՞նչ է լինելու, դրանից յետոյ կը կողմնորոշուեմ, թէ յաջորդ քայլերն ինչ են լինելու: Ես մի բան ինձ համար յստակեցրել եմ, որ ես ուզում եմ տեսնել նորմալ պետութիւն, ուզում եմ իմ ընտանիքով, զաւակներով ապրել նորմալ պետութեան մէջ, դրա համար ես աշխատելու եմ, դրա համար ես պայքարելու եմ, բայց թէ այդ պայքարն ինչպիսի դրսեւորումներ կ՚ունենայ, ինչպիսի ձեւ կ՚ընդունի, դա արդէն ժամանակը ցոյց կը տայ:*

Ն.Փ. - Հիմա էլ հակառակ տպաւորութիւնն է ստեղծւում. երբ որ դուք նախարար էիք, այնքան էլ չէիք ուզում նորմալ պետութիւնում ապրել, փաստօրէն: Երբ որ արդէն նախարար չէք լինելու, որոշել էք նորմալ պետութիւնում ապրել:

*Վ.Օ. - Չէ, իմ ամբողջ աշխատանքը միտուած է եղել դրան, բայց դա հիմնականում կենտրոնացած է եղել արտաքին հարցերի վրայ, ի պաշտօնէ ես ստիպուած եմ արտաքինով զբաղուել: Ներքինի մասին ես վերջերս եմ սկսել առաւել ակտիվ խօսել, որովհետեւ ընտրութիւններն են մօտենում, եւ ես լուրջ խնդիրներ եմ տեսնում, անելիքներ եմ տեսնում եւ ուզում եմ իսկապէս օրակարգ ձեւաւորուի: Այսօր ես նորից ասեմ, սա մեր պատմական շանսն է՝ օրակարգը ճիշդ ձեւաւորել, խնդիրները ճիշդ դնել, որպէսզի մենք կարողանանք ճիշդ կողմնորոշուել, թէ մեր անելիքները որոնք են:*

Ն.Փ. - Բայց, պարոն Օսկանեան, ինչո՞վ, օրինակ, 2003 թուականը պատմական շանս չէր: Ես ուզում եմ հասկանալ տարբերութիւնը, ինչո՞ւ 2003-ը պատմական շանս չէր, եւ ինչո՞ւ 2007-ը պատմական է:

*Վ.Օ. - Ես պատմականի առումով ոչ թէ խորհրդարանականի վրայ կը գնայի, այլ՝ նախագահականի, որովհետեւ այստեղ արդէն նախագահ է փոխւում, եւ երբ նախագահ է փոխւում, գիտէք, որ Սահմանադրութեամբ գործող նախագահը չի կարող երրորդ ժամկէտի գնալ, այստեղ դրականի շարունականութեան խնդիր է դրւում, բայց միւս կողմից էլ բացասականների վերացման հարց է դրւում, որը ենթադրում է՝ պետութիւնը որակապէս նոր հարթակի վրայ դնել: Այսինքն, միայն շարունակութեան խնդիր չէ, այլ նոր խնդիրներ ձեւաւորելու: Մենք 15 տարուայ ճանապարհ ենք անցել, եւ այսօր մեր դրականն ու բացասականը բոլորի աչքի առաջ այնքան ակնյայտ են, որ եթէ մենք չկարողացանք դրանք տեսնել, բաց աչքերով դրանց նայել, այդ խնդիրները դնել, պարտադրել, իսկապէս որ ժողովուրդը պահանջատէր պէտք է լինի, այդ խնդիրներին լուծում պէտք է տրուի, որովհետեւ հնարաւոր է այդ խնդիրներին լուծում տալ:*

Ն.Փ. - Կը ներէք, բայց իմ պատկերացումը հետեւեալն է, որ 2008 թուականին ոչ թէ պէտք է այդ խնդիրների լուծումը սկսել, այլ 2008 թուականի ընտրութիւնները պէտք է լինեն վճռական հանգրուան այդ խնդիրների լուծման գործում:

*Վ.Օ. - Ես մօտաւորապէս նոյնն եմ ասում:*

Ն.Փ. - Հիմա մենք ի՞նչ ենք անում, որ այդ խնդիրները լուծենք, եւ ի՞նչ խնդիրների մասին էք դուք խօսում: Որո՞նք են այդ խնդիրները:

*Վ.Օ. - Ժողովրդավարութեան ամբողջ իմաստն ի՞նչ է՝ որ ժողովուրդը իշխանաւորների, պոտենցիալ ընտրուողների առաջ խնդիր դնի եւ պահանջատէր լինի: Եթէ ժողովուրդը չկարողանայ այդ խնդիրները ճիշդ ձեւաւորել, խնդիրը դնել՝ չի կարող կողմնորոշուել: Մենք այսօր գնում ենք մարդկանց հետեւից, ուզում ենք մարդ ընտրել: Բայց մենք պէտք է նախ խնդիրը ձեւաւորենք, յետոյ նայենք, թէ ո՞ր անձը, ո՞ր քաղաքական ուժն է ի վիճակի այդ խնդիրը լուծել:*

Ն.Փ. - Իսկ մինչեւ հիմա խնդիրը ձեւաւորուած չի՞ եղել:

*Վ.Օ. - Չեմ տեսել ես խնդիրը այդքան յստակ դրուած:*

Ն.Փ. - Արտաքին քաղաքականութեան ոլորտում:

*Վ.Օ. - Չէ, ես ներքինի մասին եմ խօսում:*

Ն.Փ. - Կը ներէք, բայց դուք կառավարութեան անդամ էք, դուք կառավարութեան նիստերին չէ՞ք մասնակցում:

*Վ.Օ. - Միշտ չէ, որ մասնակցում եմ:*

Ն.Փ. - Բայց դուք ԱԽ անդամ էք, դուք Հայաստանի քաղաքացի էք, այսինքն...

*Վ.Օ. - Ես 80 տոկոսով կառավարութեան նիստերին չեմ մասնակցել, որովհետեւ 80 տոկոսով քաղաքում չեմ եղել կամ եթէ նոյնիսկ եղել եմ՝ շատ կարեւոր պատուիրակութիւն է եղել: Ուղղակի բախտի բերումով, այո, ես չեմ մասնակցել: Բայց ես պատասխանատուութիւնից չեմ խուսափում, այն, ինչ որ կառավարութիւնը ընդունել է՝ ես նաեւ դրա պատասխանատուութիւնն եմ վերցնում:*

Ն.Փ. - Չէ, ձեր ասածից ստացւում է, որ ինչ-որ չար ուժեր օգտուել են ձեր բացակայութիւնից եւ երկրում ամէն ինչ գլխիվայր շուռ են տուել:

*Վ.Օ. - Ես այդպիսի բան չասացի: Ես բացատրեցի, որ չեմ մասնակցել կառավարութեան նիստերին: Բայց նորից կրկնում եմ, սխալ չհասկացուեմ, ես իմ կոլեգաների հետ վերցնում եմ ամբողջ պատասխանատուութիւնը, ես կառավարութեան անդամ եմ, ուղղակի այդ քննարկումներին առիթ չեմ ունեցել մասնակցելու, որովհետեւ մեծ մասամբ, միեւնոյն է, չեմ եղել: Բայց պատասխանատուութիւնը բոլորինս է, այն, ինչ որ բացասական կայ այսօր Հայաստանի Հանրապետութիւնում...*

Ն.Փ. - Դուք խօսում էիք օրակարգի մասին:

*Վ.Օ. - Ես ուզում եմ օրակարգ ձեւաւորել: Ես ուզում եմ դրա մէջ ակտիվ լինել, որովհետեւ ընտրութիւններ են մօտենում:*

*էք ասել, որ Հայաստանը մինչեւ հիմա առանց օրակարգի՞ է շարժուել:*

*Վ.Օ. - Չէ, կառավարութիւնը իր ծրագիրն ունի:*

Ն.Փ. - Հիմա օրակարգ ունի՞, թէ՞ չունի:

*Վ.Օ. - Իր՝ կառավարութեան ծրագիրն ունի, հիմա դա ուզում էք օրակարգ անուանել կամ...*

Ն.Փ. - Դա ձեր օրակա՞րգն է, թէ՞ ձեր օրակարգը չէ:

*Վ.Օ. - Չէ, ես, օրինակ, խնդիրներ եմ տեսնում եւ կարծում եմ, որ դրանց մասին պէտք է աւելի բաց խօսել: Եւ այդ խնդիրները գալիս են մեր 15 տարուայ փորձից:*

Ն.Փ. - Օրինակ, որո՞նք են այդ խնդիրները:

*Վ.Օ. - Թուարկե՞մ այդ խնդիրները:*

Ն.Փ. - Այո:

*Վ.Օ. - Ես կարող եմ տասը կոնկրետ խնդիր ասել:*

Ն.Փ. - Երեքը:

*Վ.Օ. - Չէ, ես ուզում եմ տասը ասել:*

Ն.Փ. - Լաւ, ասէք:

*Վ.Օ. - Տասը խնդիր եմ ես ձեւակերպելու հենց հիմա: Առաջին՝ պէտք է առողջացնել քաղաքական դաշտը:*

Ն.Փ. - Հոյակապ է:

*Վ.Օ. - Երկրորդ՝ պէտք է անջրպետը վերացնել՝ իշխանութիւն- հասարակութիւն:*

Ն.Փ. - Կը ներէք, իշխանութեան եւ հասարակութեան մէջ անջրպետ կա՞յ:

*Վ.Օ. - Այսօր կայ, այսօր լուրջ պրոբլեմ կայ:*

Ն.Փ. - Մի տարի առաջ կա՞ր, թէ՞ չկար:

*Վ.Օ. - Միշտ էլ եղել է:*

Ն.Փ. - Այսինքն, այս իշխանութիւնը ընտրութիւններո՞վ է ձեւաւորուել, թէ՞ ոչ:

*Վ.Օ. - Սա պատահական չէ, մեզ մօտ, ժողովրդի մօտ պետութեան նկատմամբ դեռեւս պէտք եղած հաւատը, վստահութիւնը չի դրսեւորուել: Դա պետականութեան տեւական բացակայութիւնից է գալիս, տարբեր գործօններ կան, պրոբլեմներից է գալիս, մեր սահմանափակ ռեսուրսներից է գալիս: Բայց մենք յատուկ պէտք է ջանք դնենք, որպէսզի այդ բացը փակենք: Դա շատ կարեւոր է մեր հետագայ գործունէութեան համար: Երրորդ...*

Ն.Փ. - Այսինքն, դուք ուզում էք ասել, որ ժողովո՞ւրդը չի ձեւաւորել այս իշխանութիւնը:

*Վ.Օ. - Գիտէ՞ք, ցանկացած ընտրութիւն, նոյնիսկ ամենաարդար, ասենք՝ նոյն ԱՄՆ-ում, լաւագոյն դէպքում 51-52 տոկոսով է իշխանութիւն ձեւաւորում: Կարծում էք այսօր այլ երկրներում չկա՞յ իշխանութիւն-ժողովուրդ*

*Շար.ը էջ 19*

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆՑԱՑ ՏՕՆԸ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԿԵՐՊՈՎ ՆՇՈՒԵՑԱՒ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ



Աւանդական գեղեցիկ սովորութեամբ մը այս տարի եւս բացառիկ շուքով նշուեցաւ Սրբոց Թարգմանչաց տօնը Լոս Անճէլըսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ:

Արդարեւ, Կիրակի Հոկտեմբեր 15-ին, 2006, տօնական մթնոլորտ կը տիրէր Ս. Սարգիս եկեղեցիէն ներս: Օրուան պատարագիչն էր Թեմիս Բարեխնամ առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, աւընթերակայութեամբ՝ եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Նարեկ Ա. քհնյ, Մատարեանի, «Կոմիտաս»-եան պատարագի հոգեզմայլ երգեցողութիւնը ներդաշնակօրէն կատարեց Խաչատուրեան դպրաց դաս երգչախումբը, ղեկավարութեամբ Ստեփան Կէօզիւմեանի:

Պատարագի ընթացքին՝ տեղի ունեցաւ փոքր ընդմիջում մը, որու ընթացքին Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի հայրապետական օրհնութեան գիրը կարդաց Արժ. Տ. Նարեկ Ա. քհնյ, Մատարեան: Արդարեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն Վեհափառ Հայրապետի գնահատանքին կ՚արժանանային Խաչատուրեան դպրաց դաս երգչախումբին մէջ աւելի քան երկու տասնամեակներ իրենց անխոնջ ծառայութիւնը մատուցած երեք նուիրեալներ, յանձինս՝ Սարգիս Սրկ. Սեթեանի, Կարպիս Յակոբեանի եւ Եդուարդ Նիզամեանի:

Տեղի ունեցաւ նաեւ Ս. Կոյս Մարիամ Աստուածածինի սրբանկարի Սուրբ միւռոնով օծման արարողութիւնը ձեռամբ՝ պատարագիչ Սրբազան հօր: Նշենք նաեւ որ սրբանկարը՝ գործն է արուեստագէտ նկարիչ Արսէն Գալաշեանի: Հեղինակն իր այս ստեղծագործութիւնը նուիրած է Ս. Սարգիս եկեղեցւոյ, ի յիշատակ Յակոբ Կուտիկեանի:

Օրուան պատարագիչ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան նախ շնորհաւորեց իր միջամտութեամբ հայրապետական օրհնութեան կոնդակներու արժանացած վերոյիշեալ սպասարկուները, մաղթելով անոնց քաջառողջութիւն եւ շարունակական ծառայութիւն ի սպաս հայ եկեղեցւոյ եւ մշակոյթին: Այնուհետեւ, առաջնորդ սրբազան հայրը ոգեկոչեց հայոց ոսկեդարը կերտող Ս. Սահակի, Ս. Մեսրոպի Թարգմանիչ վարդապետներու մեծ ներդրումը եւ աստուածահաճոյ գործը ի սպաս մեր եկեղեցիին ու ազգի յաւերժութեան: Ան՝ պանծացուց նաեւ յիշատակը լուսահոգի Գարեգին Յովսէփեան կաթողիկոսին, որու նախաձեռնութեամբ 1938-ին Հոկտեմբերը յայտարարուեցաւ մշակոյթի ամիս, ի պանծացում Ս. Թարգմանչաց Վարդապետներու մշակութանուէր գործին եւ յորդորեց ներկաները հետեւելու անոնց ուղիին:

Պատարագէն ետք՝ եկեղեցւոյ յարակից Մամուլեան սրահին մէջ տեղի ունեցաւ «Սիրոյ Սեղան» ճաշկերոյթ:

Տէրունական աղօթքով սեղաններու օրհնութիւնը կատարեց Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Ողջոյնի խօսքերով հանդէս եկան ծխական խորհուրդի ատենապետ Սիմոն Աճըիլաճօղլու եւ Խաչատուրեան դպրաց դաս երգչախումբի Վարիչ՝ Բրշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեան: Իր զեկոյցէն յայտնի եղաւ որ 28- ամեայ երգչախումբը Ս. Էջնիածնի Մայր Տաճարին մէջ, ինչպէս նաեւ Հարաւային Գալիֆորնիոյ տարբեր եկեղեցիներուն մէջ իր մասնակցութիւնը բերած է հանդիսաւոր պատարագներուն:

Տիկնանց օժանդակ մարմնի ատենապետուհի Քրիսթինէ Տէմիրալըի տեղեկատու զեկուցումէն իմացանք որ անցնող տարուան ընթացքին իրենց ունեցած օգտաշատ գործունէութենէն գոյացուցած են շուրջ 25 հազար տոլար, որուն քսան հազարը տեղւոյն վրայ յանձնուեցաւ Տէր Նարեկին, արժանանալով ջերմ ծափահարութեանց:

Եկեղեցւոյ ժրաջան հովիւ Արժ. Տ. Նարեկ Ա. քհնյ. Մատարեան իր ելոյթին մէջ ողջունեց Թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք.ի եւ այլ հիւրերու ներկայութիւնը: Ան՝ գոհունակութեամբ արտայայտուեցաւ ծխական խորդուրդի եւ յարակից այլ մարմիններու գործունէութեանց մասին: Տէր հայրը հրաւիրեց ներկաները՝ մասնակցելու յառաջիկայ ձեռնարկներուն, որոնց կարեւորագոյնն է երիտասարդացի պարահանդէսը:

Այս առթիւ գործադրուեցաւ նաեւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը մասնակցութեամբ Ասատուր Ասատուրեանի, Ովսաննա Մեղրիկեանի, Քէյսի Էքմէքճեանի եւ Սթէֆընի Ապայի:

Տեղի ունեցաւ սրտաբուխ նուիրատուութիւններ, ինչպէս նաեւ Խաչատուրեան դպրաց դասի 28-րդ տարեդարձի կարկանդակի հատման արարողութիւնը:

Իր «հուսկ բանք»ին մէջ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան դրուատանքով արտայայտուեցաւ Ս. Սարգիս եկեղեցւոյ հովիւին, ծխական խորհուրդին եւ յարակից մարմիններու գործունէութեանց մասին, որոնք՝ օգտաշատ ծառայութիւններ կը մատուցանեն քաղաքի այս ոչ հայաշատ շրջանին մէջ: Սրբազանը յորդորեց ներկաներուն միշտ կառչած մնալ Թարգմանիչ վարդապետներու հայրենաշունչ պատգամին:

Սիրոյ սեղանի յայտագիրը մեծ ձեռնհասութեամբ վարեց Բրշ. Յակոբ Սրկ. Ծերունեան:

Յիշարժան ձեռնարկ մը՝ որուն համար կը շնորհաւորենք կազմակերպիչները:

**Թղթակից**












**FRIDAY, NOVEMBER 10, 2006, 7:30 P.M.**
(Gallery opens at 7 p.m. Please arrive promptly.)

Lake Avenue Church
393 N. Lake Ave.
Pasadena, CA 91101

Azusa Pacific University's Symphony Orchestra and the Lake Avenue Chamber Symphony combine for this special evening of music. Guest artists include:

**Eduard Topchian, conductor**
Armenian Philharmonic Orchestra
**Karen Kocharyan, cello**
Armenian Philharmonic Orchestra
**Duane Funderburk, piano**
Azusa Pacific University, Lake Avenue Church
**Alex Russell, violin**
Azusa Pacific University, Lake Avenue Church

Tickets available **September 18, 2006.**
$20 general admission (adults and seniors)
$10 for students with I.D.
For tickets and additional information, call:
Pasadena (626) 844-4723
Azusa (626) 815-5494

AZUSA PACIFIC UNIVERSITY
Lake Avenue Church
Christian Leadership International



ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ARMENIAN ATHLETIC ASSOCIATION
Հ.Մ.Մ.
1921
JOIN US IN CELEBRATING
85th
ANNIVERSARY
DINNER-DANCE
ՃԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
Saturday
November 11, 2006
8:00 PM
PERFORMING LIVE
HAROUT
PAMBOUKJIAN
& DJ TRONIX
@
Verdugo Hills Country Club
400 W. Glenoaks Blvd., Glendale
For Info Call
626-429-8366

# Massis Weekly

Volume 26, No. 38 | Saturday, OCTOBER 28, 2006


## Armenian-Azeri Talks Again Inconclusive

PARIS -- The foreign ministers of Armenia and Azerbaijan met in Paris Tuesday for talks that again produced no breakthrough but kept open the possibility of a crucial Armenian-Azerbaijani summit on Nagorno-Karabakh before the end of this year.

Foreign Minister Vartan Oskanian said he and his Azerbaijani opposite number Elmar Mammadyarov discussed "new ideas" on how to break the current deadlock in the peace process that were suggested by international mediators during their previous talks held in Moscow on October 6. He told RFE/RL that they agreed to hold yet another meeting three weeks later.

Oskanian said he and Mammadyarov presented their governments' responses to the unspecified ideas put forward by the American, French and Russian co-chairs of the OSCE Minsk Group. "I can't say that there is full congruence in positions," he said. "There are differences. But there are also possibilities to bring our positions closer. So we need to continue to work on it."

"That's why we agreed to hold another round of talks, most probably in Brussels around November 13, so that we continue our discussions to narrow down the differences," continued Oskanian. "If that materializes, it will make possible a meeting between our presidents during this year. There is also a possibility that the co-chairs may come to the region in preparation for the presidents' meeting."



**Mammadyarov, left, Douste-Blazy, center, and Oskanian pictured before the talks**

Mammadyarov and other Azerbaijani officials did not immediately comment on the Paris talks that began in the presence of French Foreign Minister Philippe Douste-Blazy.

According to Oskanian, the talks continue to center on the basic principles of a Karabakh settlement that call for the conflict's gradual resolution that would culminate in a referendum on Karabakh's status.

Oskanian said the mediators' "new ideas" are aimed at bridging Baku's and Yerevan's differences on some key elements of the proposed peace deal. He did not give details, saying only that he visited Stepanakert following the Moscow talks to discuss the issue with Karabakh's ethnic Armenian leadership. "In Karabakh, we managed to formulate a common position on those new ideas," he said.

Karabakh officials have repeatedly expressed serious misgivings about the proposed peace formula, unlike official Yerevan which seems to find it largely acceptable.

## Oskanian Demands Free Elections

Armenia can no longer afford to hold elections falling short of democratic standards and must therefore "draw the line" under its post-Soviet history of electoral fraud, Foreign Minister Vartan Oskanian said in a newspaper interview published on Thursday.

"Everyone must realize that we simply have no more room for holding bad elections because this time the damage to our people would be not only moral but also material," he told the "Haykakan Zhamanak" daily.

In remarks clearly directed at the country's leadership, Oskanian specifically warned of a repeat of serious fraud in parliamentary elections expected next spring. "Some people, political forces would have to be held answerable, probably during the elections," he said without naming anyone. "If there are violations and if there are [negative] consequences as a result, it will be obvious who those people are and they must be really held answerable before the people."

Analysts say the HHK's unofficial leader, Defense Minister Serzh Sarkisian, considers its victory vital for the success of his reputed presidential ambitions.

The freedom and fairness of the 2007 elections will be essential for the provision of $235 million in additional U.S. assistance to Armenia under the Millennium Challenge Program. The first major installment of the aid package promised by the U.S. government is not ex-

**Continued on page 3**

## Azeri Soldier Said Killed Near Karabakh

An Azerbaijani soldier was shot and killed overnight by ethnic Armenian forces near the territory of Nagorno-Karabakh, Azerbaijan's Defense Ministry said Saturday.

The soldier was killed by Armenian fire near the Fizuli region along the so-called line of control separating Azerbaijani and Karabakh forces, Azerbaijani Defense Ministry spokesman Ramiz Melikov said.

Senor Asratian, a spokesman for the Nagorno-Karabakh military, denied the shelling. "Nagorno-Karabakh has staunchly adhered to the cease-fire" in place since 1994, he said.

On Wednesday, Armenian officials accused Azerbaijani forces of fatally wounding an Armenian soldier near Nagorno-Karabakh.

Regular skirmishes along a buffer zone around the enclave underscore persistent tensions in Nagorno-Karabakh.

### Reporters Without Borders

## Press Freedom In Armenia Continues to Decline

Citing continuing attacks on local journalists and widespread "self-censorship", Armenia continues to rank below most other countries of the world in terms of the protection of press freedom according to the Paris-based Reporters Without Borders (RSF) organization,

The annual Worldwide Index of Press Freedom released by the Western media watchdog group rates 168 nations on indicators such as censorship, intimidation and violence against journalists. Armenia shares a lowly 101st place in the rankings with the southern African state of Malawi, up from 100th rank it occupied last year.

The RSF director for Europe and the former Soviet Union, Elsa Vidal, downplayed the slight change, saying that it does not indicate an improvement of press freedom. She argued that the country has lost 12 places in the RSF rankings in the past three years.

Speaking to RFE/RL, Vidal said that Armenian journalists working for private media continue to routinely exercise "self-censorship" and that government censorship of state-owned broadcasters remains the norm. She also cited fresh instances of violence and intimidation of Armenian journalists reported during the period covered by the latest RSF survey. "Two journalists have been threatened, and five others attacked since September 2005," she said.

The most recent of those attacks occurred less than two months ago when unknown men ambushed and beat up Hovannes Galajian, editor of the opposition newspaper "Iravunk." It was strongly condemned by leading Armenian media associations and human rights campaigners. Armen Harutiunian, the state human rights ombudsman, warned last month that violence against local reporters seems to becoming "systematic" and poses a serious threat to freedom of expression. The New York-based Committee to Protect Journalists added its voice to those concerns, saying that the Armenian authorities "do little to apprehend and prosecute the perpetrators."

Another New York-based group, Freedom House, branded the Armenian media "not free" for a fourth consecutive year in its annual survey of press freedom around the world that was released recently. The Freedom House ratings of Armenia have markedly worsened since the April 2002 closure of the country's sole television station not loyal to the government.

## Government Signals Russian Control Of Iran-Armenia Pipeline

Prime Minister Andranik Markarian on Wednesday effectively confirmed reports that Russian energy companies are set to gain a controlling stake in a key pipeline which is due to start pumping Iranian natural gas to Armenia next year.

Markarian indicated that his government will likely sell the first Armenian section of the under-construction pipeline to ArmRosGazprom (ARG), the Russian-Armenian joint venture that owns Armenia's gas distribution network.

The 40 kilometer section was reportedly covered by a controversial April agreement that allowed Armenia to temporarily avoid a surge in the price of gas imported from Russia in return for handing over more energy assets to Gazprom, the state-run Russian monopoly. The most important of them is the incomplete but modern Fifth Unit of the country's largest thermal power plant located in the central town of Hrazdan.

Gazprom initially confirmed but later refuted reports that it will also get hold of the Armenian pipeline from Iran as part of the deal. Officials in Yerevan also denied that.

However, the Yerevan daily "Haykakan Zhamanak" reported last week that the Russians will after all win control of the pipeline through the ARG operator, in which Gazprom and the Russian-owned group ITERA hold 45 percent and 10 percent shares respectively. The remaining 45 percent belongs to the Armenian government. The paper cited a Russian document which presented the takeover

**Continued on page 3**

## Turkish Watchdog Urges Boycott of French TV Programs

Turkey's state broadcasting watchdog recommended Wednesday that television stations not broadcast French media programs, the latest backlash against a French law that would criminalize denial that the mass killings of Armenians in Turkey was genocide.

Members of the broadcasting group said they had decided by an unanimous vote that their recommendation would stay in place until France took the law completely off its agenda. French films, TV series and music account for about 10 percent of the content on Turkish radio and television, according to figures provided by the broadcasting watchdog. It was not immediately able to say how much Turkish broadcasters pay annually for French content.

Saban Sevinc, a member of the watchdog's board, said French films were third in popularity in Turkey behind American and Turkish films. "France is trying to raise its voice in the world film sector. (We) hope this decision will make some noise, even if it's small, in the French film industry and art world and make them ask 'What have we done?"'

## Jugha Erased From the Face of the Earth




**Evgenios Haitidis (Greece), Jim Karygiannis (Canada), Ueli Leuenberger (Switzerland), Steven Sim, historian (Scotland) at the press Conference**

Tuesday, October 17th, 2006, an international delegation comprised of representatives of different National Parliaments and a Scottish history-of-art specialist, were received by Mr. Koïchiro Matsuura, Director-General of UNESCO, from whom they will be solemnly requesting an international investigation and open denunciation of the crime perpetrated on the memorial site of Jugha (Djoulfa/Julfa) by the army of Azerbaijan.

The delegation was formed at the behest of the Parliamentary Group Switzerland-Armenia – mainly the Co-Chairmen – the National Councillors Dominique de Buman (Vice-Chairman of the Christian Democratic-Party) and Ueli Leuenberger (Vice-Chairman of the Green Party) – with the support of Mr. Charles Aznavour, Ambassador of Armenia to UNESCO. The Parliamentarians will submit to the Director-General exhaustive documentation on the subject, as well as a signed Memorandum in which five recommendations will be presented to the state of Azerbaijan, among which, the construction of a Christian memorial on the site of the old cemetery. If Azerbaijan did not answer these recommendations, the delegation of the members of Parliament will ask the exclusion of Azerbaïdjan of UNESCO.

Moreover, the organizers of this exceptional meeting, regretted not assistance of the Armenian government.

On the 30th of August 2006, the Azeri authorities refused permission to a delegation of European Parliamentarians to go to Nakhijevan and to certify the massive destruction of the ancient «Crosses of Stone» (Khatchkars) of the cemetery of Jugha.

The first Khatchkars appeared in the 9th century. The cemetery of Jugha was divided into three sectors. The first sector included tombs from the period of the 9th to the 13th century, the second sector from the 14th to the 15th centuries, and the third from the 14th century through 1605 – covering a total area of 1600 square meters.

In the framework of the «Year of Armenia» celebrated in France in 2006 and 2007, the Louvre Museum will be offering to visitors an exhibition of 40 celebrated Khatchkars brought directly from Armenia. This will feature from 17th February to 14th May 2007.

**Jean Eckian – Paris, France**

## Javakheti Armenian Activist Beaten Up and Arrested In Yerevan

More than a dozen members of Armenia's parliament have condemned as politically motivated the beating and ensued arrest in Yerevan of an Armenian nationalist activist from Georgia's restive Javakheti region.

Vahagn Chakhalian, a leader of the United Javakhk organization campaigning for the Armenian-populated region's greater autonomy, was taken to custody and later charged with illegally entering Armenia on October 11 just hours after being assaulted by a large group of unknown men.

Chakhalian, his parents, brother and another United Javakhk activist, Gurgen Shirinian, were reportedly stopped and beaten up by the assailants as they arrived in Yerevan in a car. Shirnian is said to have been stabbed and hospitalized with life-threatening wounds. Nobody has been detained in connection with the incident so far.

Armenian law-enforcement authorities have targeted Chakhalian instead, saying that he crossed into the country without a valid Georgian passport and must stand trial on relevant charges. A Yerevan court has already allowed to them to keep the young man in pre-trial detention.

In a joint statement, 15 Armenian parliamentarians, most of them affiliated with the opposition Artarutyun alliance, claimed a "shameful link" between the beatings and the criminal proceedings, demanding Chakhalian's immediate release. They accused the Armenian authorities of trying to please the Georgian government which has been accused by United Javakhk of rigging local elections held in Javakheti earlier this month. "Instead of solving the brutal crime committed against national activists, the law-enforcement bodies of the Republic of Armenia are trying to cover it up and punish its victims by 'legal' means," the statement said.

United Javakhk rallied hundreds of supporters in the regional town of Akhalkalaki. The demonstration turned violent, with the protesters seizing the local government building before being dispersed by police.

The ethnic Armenian group, which ran on the ticket of a major Georgian opposition party, claims to have been robbed of victory in the October 5 polls held across Georgia. The local election commission rejected the allegations. Official vote results showed the National Movement Party of President Mikhail Saakashvili winning the majority of votes in most parts of the country, including Javakheti.

In a surprise move, the ruling party formed an electoral alliance with another, more famous Akhalkalaki-based Armenian group that has long been demanding a status of autonomy for Javakheti. The Yerevan daily "Haykakan Zhamanak" reported on Thursday that Armenia's leadership played a major role in the deal with the group Virk and is now keen to help the Saakashvili government neutralize other local nationalist groups.

Meanwhile, Chakhalian's arrest has infuriated United Javakhk supporters. Scores of them marched towards the Armenian border to demand his release from jail last week.

The Javakheti section of the Georgian-Armenian frontier has long been largely porous, with Georgian and Armenian border guards routinely allowing local residents to cross it with documents other than passports.

www.massisweekly.com




## "Committee Talaat Pasha" Demonstrates in Paris Despite Prohibition



**Turkish demonstrators on the "Place de la Bastille"**

PARIS -- Prefecture of Police force of Paris dissuaded, Saturday October 21, an ultra Turkish nationalist organization to demonstrate in Paris on the "Place de la Bastille". The "Committee Talaat Pasha" created in year 2005, had as an intention to protest against the French bill penalizing the negation of the Armenian Genocide. This organization which has ramifications with Ankara says victim of arbitrary to the freedom expression. Yalcin Büyükdaglu, member of the Committee of Talaat Pasha and the presidential Council of the Working Party (Turkey) declares in an press release reproduced by Collective VAN (armenian french website) "the grounds of France will groan of slogans such as: " Armenian genocide is an international lie". In March 2006, the Turkish nationalist organization had prevails in Berlin (Germany) and in Lyon (France), sowing disorders with law and order. In spite of the prohibition of the Police force, approximately 100 nationalists negationnists met on October 21 on the steps of Opera Bastille in Paris, howling of the hostile slogans to

**Continued on page 3**

## Armenia Fund's 9th Annual Telethon Set to Air Internationally

### Nationwide Broadcast in All Armenian Communities

LOS ANGELES -- Armenia Fund United States Western Region is pleased to announce the domestic and international broadcast coverage lineup of its upcoming 9th Annual International Telethon. The telethon will be aired on Thanksgiving Day, November 23, 2006 in all Armenian communities around the United States and the world.

As part of the Rebirth of Artsakh project, proceeds from the live 12 hour program will benefit the regional development of Hadrut, Nagorno Karabakh. The funds will go towards building new drinking water pipelines as well as reconstructing healthcare facilities and schools that fell victim to the war and years of neglect. In an effort to eradicate poverty in this war ravaged border region, Armenia Fund will also implement a comprehensive agricultural development project to impact 1,000 farmers in 8 Hadrut villages. A similar regional development program is currently underway in the northern Martakert region using the funds raised during last year's Telethon 2005.

President of the Nagorno Karabakh Republic, Arkady Ghoukasian and Mrs. Naira Melkoumian Chief Executive Officer of Armenia Fund International will be present during the telethon. The live program is set to air internationally from Glendale Studios, California. Below is the listing of the domestic broadcast stations in the United States and their times in respective local time zones.

H1-Armenian Public Television will also air the live program in Armenia, as well as on satellite in Europe, the Middle East, Asia, and the United States. Viewers with a Globecast World TV satellite may tune in to H1-Armenian Public Television and view the live 12 hour program. The Telethon will also be webcasted live for 12 hours on www.armeniafund.org from 8am-8pm PST.

For detailed broadcast information log on to www.armeniafund.org

## Russian Control Of Iran-Armenia Pipeline

**Continued from page 1**

as a fait accompli that will be formalized by January 1.

Markarian appeared to confirm the information as he spoke to reporters after his cabinet's regular question-and-answer session in parliament. "We are not talking about the sale [of the pipeline] as such," he said. "It's just that Armenia may invest in the charter capital [of ARG] or we will jointly make investments because it would be illogical to have two gas distribution networks in Armenia."

Markarian added that Moscow and Yerevan hope to reach agreement on the issue by the time the pipeline comes on stream later this year or early next.

Defense Minister Serzh Sarkisian, who has been actively involved in Russian-Armenian energy dealings, also strongly hinted at the pipeline's imminent transfer under ARG control. He said he will ask the ARG chief executive, Karen Karapetian, to publicly "explain the situation in great detail."

The pipeline from Iran was supposed to end Armenia's strong dependence on Russian gas and other energy resources. Critics say that by putting it under de facto Russian control the Armenian government would only deepen that dependence. Moscow is thought to have already made sure that the pipeline's diameter is not large enough to re-export Iranian gas to Georgia and other countries.

## Oskanian Demands Free Elections

**Continued from page 1**

pected to be disbursed before the polls. The European Union, for its part, has made it clear that their failure to meet democratic standards would jeopardize Armenia's participation in the European Neighborhood Policy program of preferential ties with the bloc's neighbors.

Both the United States and the EU have strongly criticized just about every presidential and parliamentary elections held in Armenia and monitored by the Organization for Security and Cooperation in Europe until now

Still, the West appears concerned about the Armenian governments failure so far to formally ask the OSCE to monitor the vote. The U.S. ambassador to the OSCE headquarters in Vienna, Julie Finley, on Thursday continued to press Armenian leaders to extend such an invitation , stressing the need for the deployment of a "long-term" OSCE monitoring mission on the second day of her visit to Yerevan.

"None of the officials has said that they don't want observers," Finley told reporters. "What they have said is that the government is awaiting the announcement of the date of the elections before they can do anything."

"We would encourage the government to invite the OSCE to conduct a long-term observation as well as a short-term observation because we all know that the lead-up to the election is as critical as election day itself," she said.

## "Committee Talaat Pasha" Demonstrates in Paris

**Continued from page 2**

the Armenians. Arrived in great number on the spot, the forces of order have constrained the demonstrators to make disappear the banners negationnists and dissolve the gathering. One hour later, calms it reconsidered the emblematic place of the French Revolution of 1789. Let us recall that, one century later, July 14, 1889, day for day, "young Turks" created the "Committee of Union and Progress".

Moreover, in the day and night of October 16, Ara Toranian, editor of the "Nouvelles d'Armenie Magazine" (News of Armenia) and Mourad Papazian, chairman of CDCA (dachnaksutyun organization of France), was victims of breaking and entering on their computers. Investigation organizes.

**Jean Eckian – Paris, France**

## Armenian Community Health Fair




GLENDALE -- The recent Armenian Community Health Fair organized by the Armenian American Medical Society of California, the Armenian American Nurses Association, and the Armenian Dental Society of California was an overwhelming success.

Over 300 attendees from the Armenian Community visited the St. Mary's Church, in Glendale on Saturday, October 14th. Various free screenings, such as blood pressure, blood sugar, cholesterol, dental exams, breast exams, spinal checks, bone density tests, and spirometry checks, were held. The Los Angeles County Office of Women's Health's Mobile Van Unit was on hand to offer free pap tests, clinical breast exams and diabetes testing.

The event was a very crucial ingredient for the multicultural, multilingual public education campaign. It encouraged many Los Angeles County Armenian women to seek regular, free pap testing to prevent cervical cancer. "It's Not Flu As Usual" brochures distributed by Krikorian Marketing Group were supporting the County of Los Angeles Public Health campaign that targets families and individuals, the medical community, businesses, and community organizations. The brochures, which will be distributed throughout the community, will be supported by a media advertising campaign that will emphasize the importance of "Clean Hands" as the best form of preventive care to avoid the Pandemic Flu. The campaign will be in Armenian, Russian, Arabic and Farsi languages.

Major Sponsors included Glendale Adventist Medical Center, Glendale Memorial Hospital & Health Center, Kaiser Permanente, Hollywood Presbyterian Medical Center, QueensCare, Huntington Memorial Hospital, Los Angeles County Women's Health Dept., Krikorian Marketing Group, Comprehensive Community Health Clinics, Willow Imaging, Verdugo Hospice, ARS Mental Health Services, and Daylight Adult Health Day Care Center.

The Health Fair was supported by: Abbot, Astra Zeneca, Takeda, Aventis, GlaxoSmithKline, Pfizer, Otsuka, Novartis, Lifescan, and TAP Pharmaceuticals.



# Mission Liquor & Wines

MISSION LIQUOR

## WE WILL BEAT ANY ADVERTISED PRICE!

| | | | |
|---|---|---|---|
| **Absolut** $13.99 750ml $25.99 1.75L | **Hennessy** VS $20.49 750ml | **Grey Goose Vodka** $20.99 750ml | **Johnnie Walker** Black Label $20.49 750ml $49.99 1.75L |
| **Pravda Vodka** $18.99 750ml | **Hennessy** VSOP $28.99 750ml | **Chivas Regal** 12 Yr Scotch $17.49 750ml | **Belvedere Vodka** $20.99 750ml |
| **Imperia Russian Vodka** $17.99 750ml | **Moskovskaya Russian Vodka** $5.99 750ml | **Level Vodka** $17.99 750ml | **Stolichnaya Vodka** $16.99 1.75L |
| **Stolichnaya Elit Vodka** $39.99 750ml | **Ketel One Vodka** $17.99 750ml | **Skyy Vodka** $10.99 750ml $19.99 1.75L | **Johnnie Walker** Red Label $14.49 750ml $28.99 1.75L |
| **Dewar's 12 Yr Scotch** $16.99 750ml | **Patron** Anejo / Reposado $29.99 750ml Silver $35.99 750ml | **Courvoisier** VS Cognac $17.99 750ml | **Cristall Vodka** $11.99 750ml |
| **Don Julio** Añejo Tequila $34.99 750ml Silver 750ml $28.99 Reposado 750ml $31.99 | **Don Julio 1942 Tequila** $94.99 750ml | **Sauza Tres Generaciones** $22.99 750ml Anejo / Blanco / Reposado | **1800 Tequila** $16.99 750ml $18.99 1.0L Blanco / Reposado |
| **Ora Blue French Vodka** $10.99 750ml | **1800 Tequila Anejo** $31.99 750ml | **Johnnie Walker** Blue Label $149.99 750ml | **Louis XI XO Brandy** $14.99 750ml |

1801 E. Washington Blvd., Pasadena, CA 91104

***Liquor (626) 794-7026 ● Tobacco (626) 797-0500***

Corner of Allen & Washington ● Open Monday—Saturday 9 am - 8 pm

www.missionliquor.com

*Minimum 12 Bottle Mix & Match ● This ad expires on 11/04/06 ● We reserve the right to limit quantities ● Sales tax excluded ● Prices subject to change without notice ● No checks or credit cards

# ԴԱՐՈՒՍ ԱՆԱՌԱԿՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑ ԹԻՒ ԿԸ ԿԱԶՄԵՆ

*ՎԱՐԴԱՆ ՔՀՆՅ. ՏԻՒԼԿԷՐԵԱՆ*

Ամէն դարաշրջան ունեցեր է իր ԱՆԱՌԱԿՆԵՐԸ, բայց՝ ներկայ ժամանակաշրջանը կը թուի անգերազանցելի ըլլալ, թիւով եւ որակով՝ բոլոր իր նախորդներէն:

Միայն նորապաշտ երիտասարդութիւնը չէ, որ խոտորած է առաքինութեան ճանապարհէն, այլ՝ մարդկային բոլոր հասակները եւ ամէն ասպարէզի մարդիկ, չբացառելով մինչեւ անգամ ծերերը, որ կ'երեւան ամէն շրջանակի մարդոց մէջ երիտասարդական աւիւնով:

Կը հանդիպենք ու կը խօսինք անոնց հետ, որոնք՝ հեռու չեն մեզմէ եւ բազմութիւններու եռուզեռէն իրենց նողկալի հակումներով եւ հեշտավառ կիրքերով:

Ամէն մէկը՝ կ'ուզէ իր կեանքը ապրիլ, համաձայն իր նախասիրութեան, անկաշկանդ միտումներով եւ ցանկութիւններով:

Հասարակութեան մէջ, անսիրելի ու վանողական ներկայութիւններ են, բարոյական տկարութիւններով: Մեղքին ու ամօթին գիտակցութիւնը՝ տեղ չէ գրաւած իրենց մտածողութեան մէջ: Որքան ալ ժխտական ու հեգնական ըլլան իրենց շրջապատէն եկած հակազդեցութիւնները կը դիմագրաւուին արհամարհանքով:

-Կ'ուզեմ ապրիլ իմ ուզած կեանքս, կը յայտարարէ անառակը յոխորտանքով: Վայելել աշխարհի բարիքները եւ հաճոյքները լիութեան մէջ, ազատ, առանց ուրիշին հրահանգով: Պէտք է լիովին յագեցում տամ մարմնիս ցանկութիւններուն: Աստուած տուեր է ամէն բարիք առատ: Յիմարութիւն պիտի ըլլար ժխտել երկնային պարգեւները եւ չհաճոյանալ անոնցմով:

Ջէ՞ք կարծեր, որ անառակը իր հաշուած դատողութեամբ՝ աղետալի ու ինքնակործան սխալ կը գործէ իր շռայլ մսխումներով:

Ի՞նչպէս մարդ Աստուծոյ լոյսէն հեռու՝ կրնայ շիտակ կեանք ապրիլ երկրի ցեխաջուրերուն մէջ սողալով:

Բոլոր անհաւատները, որ ժխտեր են Աստուծոյ հայրախնամ պաշտպանութիւնը եւ ապրեր են, առանց բարոյական յենարանի, առանց արժանապատուութեան, դարձեր են աւաղելի զոհերը ինքնախաբէութեան:

Երբ անառակը կը հաւատայ, թէ ամէն լիազօրութիւն տրուած է իրեն անկաշկանդ ապրելու իր նախասիրութիւններէն խթանուած, բնութեան չի հակասեր իր ընթացքը:

Կը լսենք իր մեծաբերան յայտարարութիւնը,

-Ես պարտաւոր չեմ հաշիւ տալու, ինձմէ վեր, ոչ մէկ մարդու: Աստուած շնորհեր է ինծի պարգեւներ ու հաշուետուութիւն չի պահանջեր, որ ընդառաջեմ Իր կամքին: Եթէ սխալիմ՝ ես պիտի տուժեմ, ոչ ուրիշը, եթէ առողջութիւնս վտանգեմ՝ ես պիտի տառապիմ, ոչ ուրիշը, եթէ հարստութիւնս մսխեմ՝ ես պիտի կրեմ ցաւը, ոչ ուրիշը:

Այսպիսի արձակ ու համարձակ արտայայտութիւններ կը յատկանշեն, ոչ միայն անառակին արմատական տգիտութիւնը, այլեւ բժշկական առումով՝ իր մտային ու հոգեկան հիւանդագին վիճակը, որ անբուժելի է:

Անառակին ժառանգած հարստութիւնը՝ շարունակական մսխումներով՝ շատ շուտ կը շոգիանայ, երբ անոր սպառումին կ'ընկերակցին ժամանակաւոր բարեկամներ:

Անառակը, կորուսած է իր բարոյական հաւասարակշռութիւնը եւ, միաժամանակ կը կորսնցնէ իր մարդկային ինքնութիւնը եւ ճակատագրական կը դառնայ իր դժբախտութիւնը:

Աշխարհի բոլոր անառակները քալած են ու կը քալեն այս ինքնակործան ճանապարհէն, դէպի իրենց անփառունակ վախճանը:

Աւետարանին Անառակ Որդին, երբ բարեհոգի հօրմէն առաւ իր ժառանգութեան բաժինը եւ օտարութեան մէջ, անառակներու հետ փճացուց կեանքը, իր պարտութիւնն էր:

Երբ՝ անդրադարձաւ իր սխալին, զղջաց ու վերադարձաւ հօրը տունը, իր յաղթութիւնն էր:

Քրիստոսի ժամանակակից անառակները, ապրելէ ու տառապելէ ետք, զգաստացան ու շահեցան Աստուծոյ հայրախնամ սէրը եւ ներողամտութիւնը, որովհետեւ անոնց մէջ հաւատքին ճրագը առկայծ կը մնար:

Բայց մերօրեայ անառակները, անաստուածութիւնը խտէալ ըրած են ու կը պաշտեն սատանային դրամանիշը եւ սիրային ու սեռային հեշտալի կեանքը: Կը հեգնեն հաւատքը, կը ծափեն մեղքը եւ մերկութիւնը, կը սնանին ոճիրներով ու գողութիւններով:

Անոնցմէ շատերը պէտք է խոնաւ ու խաւարակուռ բանտախուցերու մէջ գոցուին ու տանջուին եւ ոչ թէ մարդկային բազմութիւններու մէջ հպարտօրէն շրջագային:

***

Երեքտասնամեակ առաջ, Իստ Լոս Անճելըսի, Ս. Սարգիս Եկեղեցւոյ Լա Վըրն փողոցին վրայ ձերբակալուեցաւ սրսափազդու մարդասպան մը, որ երկար ժամանակ, ոստիկանութեան կողմէ կը փնտռուէր Միացեալ Նահանգներուն համատարած տարածքին:

Քսանէ աւելի երիտասարդուհիներու կեանքը խոշտանգած էր զանազան քաղաքներու մէջ, անագորոյն սպանութիւններով:

Դատաւարութեան օրը, դատասրահին նստարանները գրաւուած էին հետաքրքիրներու հոծ բազմութեամբ եւ համանոյն խճողումով, ուրիշներ կը յամենային դուրսը, սպասելով դատավարութեան ելքին, որ տեսնեն ոճրագործը:

Ներկայ էի սրահին մէջ եւ մօտէն տեսայ մարդասպանը, որ գեղադէմ, պարթեւ հասակով, երիտասարդ մըն էր, ոտքերը եւ ձեռքերը շղթայուած:

Կը սպասէինք դատաւորին ժամանումին, որ կ'ուշանար երկար ժամանակի յապաղումով, որ գրեթէ ժամ մը տեւեց:

Յոտնկայս յարգանքէ վերջ, հարցաքննութիւնը սկսաւ դատաւորին հետագայ հարցումով, ոճրագործին ուղղուած,

-Ի՞նչ է անունդ:

-Անունս չեմ գիտեր, առաջին անգամ ձեզմէ կը լսեմ այդ հարցումը, պատասխանեց պաղարիւն եւ կտրուկ:

-Ծնողքիդ անունները տուր:

-Ես հայր ու մայր չեմ տեսած, անծնող մեծցած եմ: Կ'ըսեն թէ երկուքն ալ արկածով մահացած

*Շար.ը էջ 16*



## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՅԱԿՈԲ ՎԱՀԱՆԻ ՀԵՏ
# ՈՐՆ Է ԾԻԱԾԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՅՆԸ
## ԿԱՄ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԷՋ ԷԼ ԿԱՐԵԼԻ Է ՄԵԾ ՊԱՏԱՐԱԳ ԱՆԵԼ

*ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՎԱՐԵՑ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ԳՐԱԿԱՆԱԳԷՏ ԳԱՐՈՒՇ ՀԱՅՑԵԱՆՑ*
*(Շարունակուածնախորդ թիւէն)*

- Գեղանկարչութիւնն ու գեղարուեստական գրականութիւնը քոյր բնագաւառներ են: Ինչպիսի աղերսներ ունեն միմիանց նկատմամբ:

*Եթէ գեղանկարչութիւնը եւ թէ գեղարուեստական գրականութիւնը ստեղծագործական են, միայն այս պայմանն էլ անգամ բաւարար է ասել, որ նրանք փոխադարձ կապի մէջ են, միմիանց միաժամանակ լրացնում են: Նոյն իմաստը, զգացմունքը, յուզմունքը, գեղեցիկը կարող են արտայայտել՝ մէկ խօսքով, միւսը պատկերով, ահա եւ քոյր բնագաւառների ով կարող է նկարչութեան մէջ իսկապէս լիարժէք ստեղծագործել, նա կարող է որոշ ուսուցումից յետոյ նաեւ գրականութեան մէջ էլ ստեղծագործել եւ ընդհակառակը: Ընդհանուր պայման երկուսն էլ ունեն միեւնոյն ճանապարհը: Կարեւորը ստեղծագործական շնորհքն է: Ոչ պակաս կարեւոր է նորոյթի ներմուծումը, որ ի հարկէ նկարչութեան մէջ աւելի համարձակ ու տեսանելի է, քան գրականութեան մէջ: Գեղարուեստական գրականութեան մէջ նոյնպէս, վերացական նկարչութեան նմանուող որոշակի մօտեցումներ կան, որ աւելի տեսանելի է բանաստեղծական գրուածքներում: Այն, ինչ նկարչութիւնը չի կարող լրիւ անել, գրկանութիւնը կարող է լրիւ իր վրայ վերցնել: Ի հարկէ գրականութիւնը, նկարչութիւնը նաեւ երաժշտութիւնը, եթէ միացնենք, այս երեքը միանշանակ կազմում են մի ամբողջութիւն եւ ամէն մէկը ունի իր ուրոյն տեղը եւ իր փիլիսոփայութիւնը: Նկարը կարող է ոչինչ չասի, բացի գեղեցիկ աչք շոյող լինելուց, կասկած չկայ եւ բազմաթիւ են չափածոյ եւ արձակ գրուածքներ, որոնք նոյնքան գեղեցիկ ու ներդաշնակ են, ինչպէս ամենալաւագոյն գեղանկարն է:*

- Ինձ միշտ թւում է, որ նոյնիսկ ծիածանից մի գոյն պակաս է: Երբ նայում եմ ինձ հոգեհարազատ գեղանկարչական աշխատանքներ, սկսում եմ ծիածանի ութերորդ գոյնի որոնումներ անել եւ յաճախ ինձ յաջողւում է յայտնաբերել: Ո՞րն է ծիածանի ձեր ութերորդ երանգը: Այն կա՞յ արդեօք, թէ՞ դա եւս տեսլիք է:

*Ծիածանը նոյնպէս անթերի չէ, եթէ ինչպէս դուք էք ասում, որ մի գոյնը պակաս է: Սակայն ես կ՚ասէի ոչ միայն մի գոյն է պակաս, այլ աւելին: Չնայած դրանց այնտեղ երեք կարեւոր գոյները կան, կարմիրը, կապոյտը եւ դեղինը, սրանցով կարելի է վեց գոյներ ստանալ, որից յետոյ 12 գոյներ: Իսկ ծիածանի եօթ գոյների, ամէն մի 2 գոյների արանքում նոյնպէս գոյներ, երանգներ կան, դեռ սա վերջնական չէ, դարձեալ անհրաժեշտութեան դէպքում, կարելի է նոր երանգներ ստանալ: Ձեր ութերորդ գոյնը կամ երանգը հաւանական է, որ լինի ծիածանի եօթ գոյների արանքում: Իսկ ինձ համար այդ ութերորդ երանգը շատ կ՚ուզենայի, որ համընկնէր ձեր փնտռած եւ յաճախ էլ յայտնաբերած երանգի հետ եւ այդ լինէր մեր դրօշի երրորդ երանգը, ծիրանը, ծիրանագոյնը:*

- Որպէս իմաստասիրութեան պտուղներից մէկը գեղարուեստական գրականութիւնը նոյնպէս օգտւում է փիլիսոփայութեան տնամերձից: Գեղանկարչութիւնը կարողանում է օգտուել վերոյիշեալ հասկացողութիւնից, եթէ այո, ինչպէ՞ս:

*Այս հարցը շօշափելու համար անհրաժեշտ կը լինի մի փոքր մէջբերում անել, միայն գեղագիտականի իմաստով, թէ ինչ է փիլիսոփայութիւնը: Փիլիսոփայութեան հայերէնը կը լինի իմաստասիրութիւն, մի անգամից կարծես թէ աւելի յստակ ու պարզ դարձաւ: Թեման շատ մեծ է, աշխատեմ միայն մի մասով, որ մօտ կը լինի կապ ստեղծել փիլիսոփայութեան եւ գեղանկարչութեան միջեւ: Քանի որ գրականութեան եւ փիլիսոփայութեան միջեւ փոխադարձ կապը շատ աւելի հեշտ է, երկուսն էլ լեզուով է կառուցւում եւ քանի որ նկարը այլ ձեւ է, լեզուի հարց չէ, ստեղծւում է պարզեցուած ձեւով մտքի, աչքի եւ ձեռքի շնորհիւ, մարդու կողմից, որը տիեզերքի մաս է հանդիսանում: Նկարչութիւնը, նկարը փիլիսոփայութեան իմաստով գեղագիտական է: Սրանով մենք արդէն լուծեցինք այն հարցը, որ նկարչութիւնը որպէս երեւոյթ փիլիսոփայական է, փիլիսոփայութիւնը իմաստասիրութիւնը հասարակական գիտակցութեան ձեւ է, որ տալիս է ընդհանրական հասկացողութիւն, պատկերացում աշխարհի եւ մարդը իր տեղը ունի, իր ճանաչողական գեղագիտական առումով որ ի մէջ կը մտնի նաեւ նկարչութիւնը բնութեան հետ միասին: Այսպիսով նկարչութիւնը նոյնպէս մաս է կազմում փիլիսոփայութեան: Այստեղ արդէն անհրաժեշտ է ասել, որ գեղանկարչութիւնը կարող է օգտուել եւ օգտւում է փիլիսոփայութիւնից: Նկարչութիւնը գրականութեան հետ միասին լուսաբանում է տիեզերքում մարդու, կեանքի իմաստը, այստեղ նաեւ յուզական երեւակայական, վերացական մտածողութեան հետ միասին: Որտեղ նկարչական գիտակցութիւն կայ, այնտեղ էլ փիլիսոփայութիւն կայ:*

*Եթէ հարցին աւելի ընդհանրացուած մօտենանք փիլիսոփայութիւնը ամէն տեղ է, սկսած ամենափոքր լոյսի հոյլից մինչեւ ամենահսկայ աստղը ու տիեզերքը: Իսկ գեղանկարչութիւնը մաս է կազմում տիեզերքին: Մի անգամից ասեմ, մարդու դատողութիւնը, ձեռքով քաշած գիծը, մակերեսը, տարածութիւնը, հեռաւորութիւնը, հորիզոնը, լոյսի ուղեգծային տարածուելը, լոյսի եւ ստուերի խաղը, երկինք, գետին, արեւ, լուսին, ծիածան այս բոլորը եւ դեռ շատ ու շատ աւելին մաս են կազմում տիեզերքին եւ հանդէս են գալիս ամէն մի գեղարուեստական ստեղծագործութեան մէջ կամ ընթացքում: Այս նշանակում է, որ գեղանկարչութիւնը օգտւում է փիլիսոփայութեան տնամերձից:*

- Ձեր նկարները նաեւ մեքենագրական թղթի կէսի վրայ են արուած: Չի՞ խանգարում քեզ նման մակերեսի սահմանափակութիւնը, չի՞ կաշկանդում:

*Նկարիչի համար, ով անցել է նկարչական արուեստի բոլոր դասարանները, նկարելու իմաստով ոչ մի հարցում անհնարին բան չկայ, կայ որ հեշտ, արագ է ստացւում եւ կայ աւելի ուշ է ստացւում: Միշտ էլ փոքր չափի մէջ աւելի յարմար է աշխատելը: Փոքր չափից մեծին անցնելը դժուար չէ: Դասական նկարչութեան մէջ սովորաբար նկարի չափը մարդաբանական չափից քիչ դէպքերում է անցնում: Իսկ վերացական նկարչութեան ժամանակ լինում է փոքրից մինչեւ շատ մեծ, այնքան մեծ, որ կտաւը փռւում է յատակին եւ նկարիչը ոտքերով մտնում է կտաւի վրայ որպէսզի վրձինով նկարի: Ընկալման իմաստով շատ մեծ նկարները ունեն իրենց դժուարութիւնները: Այստեղ նոյնպէս մեծից անցնելը փոքրին դժուար չէ: Այս իմաստով ես նկարում եմ փոքր աւելի շատ, քան պէտք է, որից յետոյ որը որ հաւանում եմ նկարում եմ կտաւի վրայ: Ի հարկէ փոքրը եւ մեծը, նոյնը չի ստացւում, բայց այդ աւելի լաւ է: Ձեր նշած իմ նկարները չափով իսկապէս փոքր են, այդ պատճառով ես այդ նկարները անուանեցի վերացական նկարչութեան մանրանկարչութիւն: Նման հասկացողութիւն մինչեւ հիմա չի եղել, այդ նկարներով, հենց այդ չափով կարելի է կազմել գիրք ալբոմներ, որի նմանը այսօր աշխարհով մէկ վերացական գեղանկարչութեան ոչ մի նկարիչի մօտ չկայ «Փոքր եկեղեցու մէջ էլ կարելի է մեծ պատարագ անել»:*

- Դուք երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակից էք: Ձեր նկարներում իշխում է խաղաղութիւնը ինչո՞ւ: Պայքարը դադարե՞ց, չկա՞յ:

*Բոլոր ասպարէզներում էլ պայքարը միշտ եւ ամենուրէք կայ: Նամանաւանդ քանի կան բիրտ, խելագար, մոլեռանդ, մոլուցքով հիւանդ ազգամոլ, ուրիշի երկիրը, հողը, ջուրը եւ ունեցուածքը յափշտակելու ցանկութիւն ունեցող անհատներ ու ժողովուրդ խմբաւորումներ: Քանի աշխարհում կան ուժեղը եւ թոյլը, համատարած անարդարութիւնը, հայկական հողում ծնուած հեռուից եկած Օսման ցեղերը: Տասնեակ դպրոցական ամենաքաղցր ընկերներս չվերադարձան տուն պատերազմից, սուգը, մարդկային կորուստը անասելի էր: Պատերազմը ինձ համար էլ ծանր եղաւ, ինչպէս եւ ընկերներիս կորուստը, որը մինչեւ հիմա էլ ես զգում եմ եւ չեմ մոռանայ երբեք: Պատահականութիւն էր, որ ես պատերազմից վերադարձայ, ոչ մեծ վնասուածքներով, սակայն լուրջ յիշողութեան կորուստով: Այսքանից յետոյ ես ատեցի պատերազմը, բռնութիւնը, անգամ սովորական վէճը եւ կռուրտոցը: Ես լաւ մարզուած եմ եղել մարզախաղի շատ ձեւերում, ունէի հանգիստ, դանդաղ խփող սիրտ եւ լաւ շնչառութիւն: Մինչեւ վերջերս էլ չգիտէի ինչ բան է յոգնածութիւնը: Պարզ է, եթէ ես ատել եմ պատերազմը եւ կռիւը, ուրեմն սիրել եմ խաղաղութիւնը: Այդ պատճառով ներել եմ, անգամ այնպիսի հարցերում երբ պէտք է չէր ներել:*

*Շատ առիթներով այնպիսի մարդկանց եմ հանդիպել, որոնցից եւ ոչ մէկը իրենց ամէնից ծանր յանցանքի համար էլ ներողութիւն չեն ասել: Ներողութիւն ասող քաջ մարդու ես չեմ հանդիպել: Իսկ ստախօսներին վաղ թէ ուշ ես մերկ եմ տեսնում, բայց ոչ մէկին երեսով չեմ տուել:*

-Ինչ կ՚ասէք ժամանակակից Ամերիկեան գեղանկարչութեան, յատկապէս վերացականի մասին: Զուգահեռներ կա՞ն Եւրոպականի հետ եւ ինչ դիրքերում էք դուք գտնւում:

*Ժամանակակից գեղանակրչութեան իմաստով, կարելի է ասել, որ Ամերիկայի եւ Եւրոպայի միջեւ մեծ տարբերութիւն լինել չի կարող, այն պարզ պատճառով, որ այսօր առատ տեղեկութեանց պայմաններ կան: Զուգահեռներ կարելի է անցկացնել այն իմաստով, որ Եւրոպայում ինչպէս եւ Ամերիկայում մեծ քանակի նկարիչներ են աշխատում վերացական գեղանկարչութեան ուղղութեամբ: Ամերիկայում մեծ յաջողութիւններ ունեն ջրաներկով աշխատող նկարիչները, որոնք լաւ տիրապետում են գործին: Ամերիկայում այսօր նկարչութեամբ զբաղուող նկարիչների մեծ մասը, բնութեան չեն գնում իւղաներկով կտաւի վրայ նկարելու, այլ բնութիւն են գնում լուսանկարչական խցիկով: Շատ բարդ դէպքեր, վիճակներ նկարում են լուսանկարչականով, մնացածը կատարւում է արուեստանոցում: Լուսանկարից արտանկարւում է կտաւի վրայ: Արտանկարելով ստացւում են հետաքրքիր նկարներ: Պարզ է սա արուեստ չէ: Ամերիկան հարուստ բարձր տեխնիկայով օժտուած նկարիչներով, սրանց մօտ պակասում է ստեղծագործականը, իսկ որոշ դէպքերում ստեղծագործական է, բայց ոչ գեղանկարչական:*

*Նկարչական լուրջ գործը, սովորական ապրանք չէ, ծախելու նպատակով գովազդը վնասում է, արուեստի վեհութեանը եւ ճիշտ ըմբռնելուն: Այս պատճառով նկար սիրող որոշ մարդիկ չեն ջոկում որտեղ է ջուրը եւ որտեղ է կրակը: Ճիշտ նպատակը մէկն է, ինչքան կարելի է շատ լուսաբանել եւ տարածել առաջաւորը եւ արժէքաւորը: Դասական նկարչութիւնը կարիք չունի լուսաբանման, նա երկու հազարից աւելի տարի ցուցադրուել եւ լուսաբանուել է: Նորը, ժամանակակիցը չնայած իր բազմաթիւ երանգներով իր ճանապարհը հարթում է: Որն է այդ ճանապարհը, գովելի է վեհը, գեղեցիկը, երազայինը, թաքնուածը, ֆանտազիան, անսպասելին, էջեկտիւը, էմոցիոնալը եւ այլն: Դպրոցը, եթէ իսկապէս այդ դպրոց է, յստակ, մաքուր եւ թափանցիկ, կարող է ճաշակով առաջաւոր մարդ դաստիարակել, կարող կը լինի միաժամանակ ճիշտ արուեստ, գիտակ հասարակութիւն ստեղծել:*

*Այն հարցին թէ ինչ դիրքում եմ գտնւում այսօր ես, համարեա թէ հասկացուեց, որ ինչ որ ստեղծել եմ անհրաժեշտ է շարունակել եւ եթէ հնարաւոր լինի հրատարակել: Փաստօրէն այնպէս է ստացուել, որ կարելի է ասել, որ ես վերացական գեղանկարչութեան մանրանկարչութեան առաջադէմքն եմ, հիմնադիրը: Աւելի յստակ, ինչպէս Ամերիկեան վերացական գեղանկարչութեան հիմնադիրը հայազգի Արշիլ Կորքին է, վերացական գեղանկարչութեան մանրանկարչութեան հիմնադիրը Hakn Vahn է, Յակոբ Վահանին: Հայ մարդը աշխատող եւ ստեղծագործող է, քարից անգամ հաց քամող հայը, արուեստում էլ նա կը լինի առաջաւոր:*

**Վերջ**

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին

**ՊԱՏՄԱԿԱՆ**

# ԲՌՆԱԳԱՂԹ...

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*

*1949 թուականի Յունիս 29ի առաւօտ, բանաւանն էր զարթնել, արեգակը արծաթ լոյս էր վառել կաղնիների սաղարթներին, կանաչն էր վառւում ու հոսում բնակելի տաղաւարների վրայ: Արեգակի լոյսով զուարթացած կանաչը տիեզերական առասպել, բնութեան հեքիաթային առեղծուած է, կարծես արարիչի կամքով է այնտեղ կենսանիւթ համադրւում: Լոյսն էր գրկել անտառի բացատի բանաւանը, բնակիչները դուրս էին ելել իրենց փոքրիկ պատշգամբներին, լուռ նայում էին իրար, բանաւանը լռել էր, ինչու... արդեօք պատահածի արթնած վախի սարսափից էր այն: Փոխանակ արեւին ժպտալու, փոխանակ առաւօտեան արդար արեգակի բարի լոյսի մաղթանք աւետելու, փոխանակ լուսոտ ժպիտ ցանելու դրացիների սրտերին, փոխանակ իրենց աչքերը անտառի կանաչ լոյսով հրճուելու, փոխանակ անտառի անուշ զեփիւռով իրենց դէմքը ցօղելու, լուռ էին: Գործարանի շոգեմեքենայի շչակներն էին հնչում աշխատանքի կանչելու, կարծես այն ամէն օրուայ նման աշխատանքի հրաւէր չէր, կարծես այն ողբաձայն բուքի նման մռնչում էր, ինչ էր պատահել... հարաւ արեւելեան կողմի տաղաւարի՝ Տաթեւ գիւղից Բաբայեան ընտանիքին, կէս գիշերուայ անտառային լուռ ու խաւար մութին, աքսորի էին տարել, ինչո՞ւ:*

*Գորիսի շրջանի Շուռնուխի գիւղին յարող բանաւան, այդտեղ էր հիմնադրուել Կապանի (Ղափան) Փայտամշակման Գործարանը: Այդ ինչպէս էր, որ Մոսկովից իմացել էին հեռու Զանգեզուրի անտառների ծառերի փայտանիւթի ամրութեան մասին, երեւի տեղի բոլշեւիկները վերեւներին հաճոյանալու համար Հայոց անտառներին էին մատնել: Բեխի ծառեր էին, որոնց արմատները մխրճուած Սիւնեաց աշխարհի հողին, պղինձ ու ոսկի քաղելով ամրացել էին: Կայծեր էին թռչում երբ կացինով հարուածում էին նրանց չոր բնափայտին: Որոտան գետի հոսքի լանջերից մինչեւ Կապանի մատոյցները տանող ինքնաշարժի խճուղին պատռում էր Զանգեզուրի կուսական անտառների սիրտը: Այո, ճեղքել էին Զանգեզուրի սիրտը եւ այն կողմը կոչել Ատրպէյճան: Ով էր պատռել սիրտը այդ լեռների, հեռուից եկող կարմիր զինուորներն էին, որոնք իրենց ձեռքերը լուացին այստեղ ու այնտեղ հայոց բզկտած հողից հոսող արիւնով:*

*Խճուղիի միայն հիւսիսային կողմի լանջերի ծառերն էին հատում, որոնց հուժկու իրաններից տարբեր չափերի ու տեսակների աղոցանիւթ էին պատրաստում՝ իրենց երկրի մանուագործական հաստոցների մազոգներ եւ դղեակների տախտակամածները յարդարելու մանրատախտակ: Նման ծառէն աճում էին խճուղիի երկու կողմերին էլ, բեխիները յաճախ իրար գրկած բարեւի էին կանգնում ինքնաշարժերին, իրենց վարսերով շոյելով նրանց տանիքները, սակայն այն կողմից ոչ մէկ ծառ էին թողել հատել: Հայեր, ձեր հին աստուածները ինչքան անանձնական բարութիւն էին ցանել ձեր սրտերին, տուեցիք, տալիս էք ինչ որ կայ ձեր արիական հոգիներում, եւ թողեցիք նաեւ ձեր ծառերը լացէին, անդունդներն էին նրանց ցաւի արձագանգներից ողբաձայն որոտում: Միայն ամիսներ առաջ ես այդ ճանապարհներով դարձեալ քայլեցի, եւ սահման չկայ այժմ, հայու զէնքը, հայոց քաջերի կռիւը իրենց սահմանը տարաւ մինչեւ Մայր Արաքս եւ կռուից քրտնած իրենց դէմքերը ցօղեցին նրա ջրերում:*

*Մուսա Լեռցի «Կապորալ» Արմենակը իր մանչերը շուրջը բոլորած բակ էր դուրս եկել, զարմանքից չորս դին էր նայում, ինչ, հայերին իրենց Հայաստան աշխարհից աքսորի էին տարել, Արարայի յաղթական ճակատամարտից դէպի Կիլիկիա իր արշաւանքի ճանապարհին Թուրքի գաղթի քարաւանների փշրանքներ տեսել էր, սակայն այստեղ ինչու տեղահանութիւն, բռնագաղթ:*

*Շշուկաձայն իրարու հաղորդում էին, որ Բաբայեանների ամբողջ ընտանիքին՝ մանչերին, ծնողներին, այդ անտառային գիշերը լցրել էին բեռնատար ինքնաշարժի թափքին ու տարել դէպի Կապան: Ասում էին որ հայր Բաբայեանը ցարական իշխանութեան ժամանակ պարզապէս ոստիկանութեան ծառայող էր եղել: Յետոյ պիտի իմանայինք, որ հայրենի երկրի շէների բռնի հանրայնացուած հողի շինականներին ու քաղաքների հազարաւոր ընտանիքներին, նրանց անկողնային հիւանդներին, ծերունի ծնողներին, մանչերին, գրկի մանչերին առանց դատի այդ սեւ մութ գիշերին տարել էին երկաթուղային կայարաններ, լցրել ապրանքային փոխադրակառքերին ու տարել դէպի ցուրտ երկիր: Չարի երկիր, չարի կառավարում, դրանից մի տասնամեակ առաջ երեսունական թուականներին, քառասուն հինգ միլիոն իրենց քաղաքացիներին բանտարկել էին, տանջահարել, խոշտանգել, սպաննել, աքսորել ցուրտ երկիր, Կուլակ թերակղզի: Բանտարկել էին Հայոց աշխարհի համարեա բոլոր իմաստուններին, իրենց քերթողներին, վարժապետներին, նոյնիսկ անմեղ շինականների ու բանուորների: Աստուած չունէին որ գութ կաթէր իրենց սրտերին, նոյնիսկ անմեղ շինականների ու բանուորների: Աստուած չունէին որ գութ կաթէր իրենց սրտերին, դատարկուել էին հոգիները իրենց, քանդելու կուռքին էին պաշտամունք նուիրել, իրենց երգով աշխարհը քանդելու կոչ էին առել:*

*Ազատ աշխարհի մեծ պետութիւնները, դաշնակցած խորհրդայինների հետ, նացիզմն էին ճզմել՝ իր իսկ որջում: Նրանց զարկին էին մասնակցել նաեւ գերմանների թողտուութեամբ սպաննուած մի արիական ցեղի յետնորդների զօրաբանակները: Նրանց այրուած խորհրդարանի առաջ թմբուկ զարկին, իրենց լեռնականի պարի տոփիւնից շէնքը դողաց, նրա քարէ պատերին ապարանցի, զանգեզուրցի քաջորդիներ իրենց հայկեան անունները դրոշմեցին, մի մարտիկ էլ իր սուինով փորագրել էր «Հիթլեր ես քու...» եւ իրենց յաղթական դրօշներով հայոց մայր հող էին վերադարձել: Կաթողիկոսն Ամենայն Հայոց Գէորգ Զ. միջնորդել էր կեդրոնական կառավարութեանը ի սփիւռս հանգրուանած հայերին՝ հայրենադարձնել: Երեք տասնամեակ առաջ մահուան քարաւաններից փրկուած փշուրները խանդաղատանքով էին դիմաւորել հայրենի երկրի կանչը, եւ հայրենիքի վառուող կարօտը իրենց սրտերում՝ տասնեակ հազարներով փութացել էին արձանագրուել:*

*Եւ 1946-1947 թուականներին նաւերին բազմած բազում քարաւաններ անցան Վոսփորի ափերով, եւ շատեր երեւի ինչեր չասացին նրա ափերին ճեմող թուրքերին: Արաբական Կոմունիստական Կուսակցութեան մէջ սպրդած ապազգային հայ բոլշեւիկները պարտադրել էին դաշնակցական հայրենադարձներին «Ժողովուրդի Ձայն» լրագրում գրաւոր յայտարարութեամբ հրաժարուելու կուսակցութիւնից, որոնց արձագանգները հասել էին Հայաստանի Պետական Անվտանգութեան Կոմիտէ: Եւ Յունիսի վերջի այդ ողբի գիշերին նրանց եւ այլ բազում անմեղների տարել էին մերձերեւանեան երկաթուղային կայարաններ, հայրենի երկրից բռնագաղթ, թուրքից ընդօրինակած գաղթ:*

*Գարշելի, դիւահար այդ «Մարդուկ»ի սրտի սեւ լոյսը խաւարելուց յետոյ 1950-ականներին ցուրտ երկրից վերադարձած բազում բռնագաղթուածների հետ զրուցել եմ, ունկնդրել նրանց խօսքը: Նրանց դէմքերից ցաւ էր կաթում, ճակատներին ակօսուած կնճիռները տառապանքների անցած ուղիներն էին, վարսերին ցուրտ երկրի ձիւնն էին բերել, հայրենիքի բեկանուած կարօտի յիւզն էր հոսում խօսքերից, նրանցից մէկը դառնացած զուաց, թէ Արագածի գագաթին պայթած շանթերը բեկանեմ եւ այն նետեմ՝ այս երկրի տիրակալների սրտերը այրելու: Երկրից դառնացած հոգեկան տուայտանքի սրտի կսկիծից, ցրտից, արկածներից հայու ինչքան ճրագներ մարեցին, մանչեր որբացան, հարազատները լուռ սգալով անէծք թափեցին երկրին, ցուրտ երկրի հողում մրսեցին իրենց յանգած մարմինները: Արարիչը ինչու այդքան սեւ գրեց հայոց արմենական լայն ճակատներին, թէ իրենք չկարողացան դարբնել իրենց ճակատագրերը: Արեւի հուրը գրկած զէնքով չպաշտպանեցին իրենց նահապետից ժառանգած հողը, տարբեր տիրակալներ յօշոտեցին այն եւ այս նոր տիրակալը այդ մի փշուր հողից էլ տարաւ նրանց շատերին:*

*Լիբանան, Այնճարի ճահճոտ դաշտ էին բերել Մուսա Լեռցիներին: Եօթ-ութ տարի առաջ, թշնամու ստուերներից փախչելու եւ ազատութեան տենչի համար «Մեղայ հայրենի հողին» կանչելով թողել էին իրենց շէները ու գաղթել: Լուցկու տուփիկի նման թրծաշաղախէ մէկ սենեականոց իրենց տնակներին էին հասել հայոց երկրի տուն դարձի զանգերի ղօղանչները: Նրանց կէսից աւելին, 1946-1947 թուականներին հայրենիք էին գաղթել: Արքայից Արքայ Մեծն Տիգրանն էր երկու հազար տարի առաջ իր յաղթական բանակների հետ նրանց բնակեցրել այդ լեռների լանջերին, եւ վերադարձ: Նրանց հոգիներում իրենց լեռների զեփիւռի քնքշանքը դեռ չյանգած, իրենց դաւանած կուսակցութեան պատկանած լինելու համար շատ ընտանիքների ցուրտ երկիր տարան, եւ ընդմիշտ մրսեցին իրենց հոգիները, ափսոս իրենց ցաւին:*

*Հայրենիքում բնակութիւն հաստատելու վայր նշանակելու Պաթումի հաւաքակայանի տեսուչը, քմծիծաղը դէմքին յայտնում էր Արմենակին, որ Գորիսի շրջանը Երեւանից միայն վաթսուն քմ. էր հեռու, եւ որ շատ յարմար վայր էր այնտեղ բնակութիւն հաստատելու: Չէր առարկել, գիտակցելով հանդերձ որ նա խաբում էր: Եւ հայր Արմենակի ութ հոգիանոց ընտանիքը հանգրուանել էր Զանգեզուրի լեռներ, Շուռնուխի գիւղին մօտիկ փայտամշակման գործարան: Հայոց երկրում իմ կեցութեան ամենաերջանիկ պահը եղել է իմ ծննդավայր Մուսա Լեռն յիշեցնող Զանգեզուրում բնակիլս, նրա անտառների կանաչ լոյսը, նրա մարդկանց անուշ յուշերը եւ մայր ոստանում տուն պատելս ու նրա բակում ծառեր ու խաղողի որթատունկ տնկելը:*

*Այդ Յունիսի 29ին, ինձ գործուղել էին Կապան: Ճանապարհին բեռնատարներն էին հեւալով շարժւում առաջ, կարծես չէին ուզում բաժանուել իրենց տանիքներին հպած ծառերից, որոնք ցաւագին լացի նման մեղմ խշում էին: Ինքնաշարժը լուռ անցնում էր բեռնատարների կողքով, որոնց վրայ նստած էին աքսորականները: Մանչերն էին գրկել հայրերին, որոնց նայուածքներից օգնութիւն հայցելու պաղատանք էր կաթում: Փոքր մանչերը հպել էին մայրերին, որոնցից մէկի կանչը «Մամի տուն եմ ուզում» ճզմել էր հոգիս: Մայրերի գրկերին փոքրիկները ճչում էին ողբաձայն, իմ ջահել հոգիս լացում էր: Ձեռքերը ճակատներին հերարձակ կանայք, եղեռնամայրերի նման լուռ ողբում էին: Այլայլած, մշուշոտ դէմքերով տղամարդիկ, հայեացքներն էին դէպի ետ՝ իրենց շէների ստուերները փնտռելու: Հայերին հատել էին իրենց լեռներից, նրանց կանաչ լոյսից:*

*Կապանում ինձ յանձնարարուած աշխատանքը աւարտելուց յետոյ երկաթուղային կայարան գնացի: Ես ինչու գնացի այնտեղ, ինչու նայեցի այդ դժխեմ տեսարանին, ինչու ականատեսը եղայ այդ մարդկային ողբերգութեանը, որը որպէս ահաւոր թախծութիւն պատկերուած է երեւակայութեանս տեսիլքում: Գրասեղանիս հակած փշրում է սիրտս, փշրւում եմ նրանց դէմքերին իջած աքսորականի ցաւի մրմունջների յուշերից: Կայարանի բացատում խուռներամ մարդիկ, երկաթուղային բեռնատար կառքերի դռներին աքսորականներ, լացի ու հառաչանքի լուռ ողբ, բաժանման անաղմուկ ցաւի կսկիծի խշոյն: Ամպերն էին կախուել կայարանի վրայ, մթնել էին, կարծես ահա երկինքն էր փլուելու, կարծես այնտեղից շանթեր պիտի պայթէին խարոյկելու չարութիւնը: Դէմքս հակած ներքեւ վերադառնում էի, ինձ հետ տանելով հայոց երկրի աքսորականների ցաւը, մանչերի լացի կանչերը: Ափսոս նրանց տառապանքին: Հոգիները նրանց փշուր, փշուր եղան, այդ երկրի երեսին կաթած անէծքից փլուեց այն: Ես փախայ այնտեղից:*

*Հանգստեան կոչուած աւագ դատաւոր՝ Վարդուշ Մանասէրեանին կադրերի բաժնի պետ էին նշանակած եղել իմ պաշտօնավարած կազմակերպութիւնում: Նախկինի նման յոխորտ էր, տիրական կամքն էր թելադրում, աշխատակիցները ակամայ համակերպւում էին: Իմ սրտում դեռ չէր մարել նախնիներից ժառանգած ըմբոստ ոգին, յաճախ հակադարձում էին նրան, սպառնացել էր միջնորդել ետ վերցնելու ինձ շնորհուած շքանշանը, միայն տնօրէնի յորդորով ես այն կամովին ետ չվերադարձրի: Ասում էին որ յետագայում կուրացել էր, երեւի շատ «Արդար դատելու» համար:*

*Հայաստանի հանրապետական դատախազութեան քննչական բաժանմունքում էր Վարդուշը ծառայած եղել: Պատմում էր, որ Յունիսի 29ի աշխատանքի օրուայ աւարտին եռուզեր էր եղել եւ իրենց կարգադրուել մնալ աշխատատեղերում: Ընդհանուր ժողով, դատախազը յայտարարել էր, որ իրենց ընտանիքներով հանդերձ Երեւան քաղաքից աքսորուելու էին ոչ բաղձալի անցեալ*

*Շար.ը էջ 18*

# ՈՂՋՈՅՆ ՔԵՍԱՊԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԻ ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿԻՆ

*ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՃԱՃԵԱՆ*

*1947 Յուլիս 22, Պատմական Թուական:*

*Անձի մը առաջին պարտականութիւնը հանդէպ հայրենիքին ու ազգին զանոնք սիրելի է: Ան որ չի սիրեր իր Ազգը ու Հայրենիքը, ապերախտ է պարզապէս:*

*1947 Յուլիս 22ին, Թուականէս քառասուն տարիներ առաջ, Մեծն Տիգրանի երբեմնի մայրաքաղաք՝ Անտիոքի բարձունքէն, արեւի առաջին շողերը կը համբուրէին մեր սէգ Կասիոսի ճաղատ գագաթը (Ճէպէլ Աքրայի):*

*Քեսապի երեք յարանուանութեանց եկեղեցիներու զանգակները կը ղօղանջէին, աւետելով ներգաղթի պատմական լուրը...:*

*«Կռունկները կը վերադառնան»:*

*Ներգաղթող եւ ոչ-ներգաղթող քեսապցիները հաւաքուեցան Քեսապի հրապարակը (Խոռ):*

*Տաւուլ-զուռնան կ՚արձագանգէին հպելով Կասիոսի լանջին:*

*Հարսնեւորները հարս կը տանէին Հայաստան...: Բաժանման խորհրդաւոր եւ անմոռանալի ժամն էր...: Ողջագուրում, համբոյրներ, բաժանումի արցունքներ: Բախտաւոր ժողովուրդը, վերջին անգամ, արցունքոտ աչքերը յառած Կասիոսի... որ գերուած է Արարատի նման, եւ կը կազմէ մնացորդացը Բագրատունեաց եւ Կիլիկեան իշխանութեան: Այսպէս կը բաժնուէր քեսապահայը հազարամեայ իր պապենական գիւղերէն:*

*Եօթանասունը անց ծերուկ մը, աչքերը յառած Կասիոսին մրմնջէր. «Մնաս բարով չղթայուած սէգ Կասիոս, Սըլտրան, Տունակ, Սեւ Լեռ»: Այո, վայրագ Թուրքը 1915ին տեղահանեց քեսապցին որ գինք փճացնէ արաբական անապատներուն մէջ, գինք չպրտելով մինչեւ Եգիպտոս: Վերապրածները վերադարձան հայրենի օճախ 1920ին, շէնցնելով իրենց հրկիզուած գիւղերն ու բնակարանները:*

*1947 Յուլիս 22ը հայրենադարձի մեծ Թուական է... խանդավառ ժողովուրդը Սուրիական եւ Խորհրդային Հայաստանի դրօշակներ պարզած կը բարձրանար բեռնակառքերու վրայ: Մարդիկ ու բեռներ իրար խառնուած էին: Անշուշտ յուզիչ էր բաժանումը ազգականներուն: Քեսապցին հայրենասէր էր: Անոնք Աղասիի գաղափարովն ու շունչով Թրծուած էին: Անոնք դաստիարակուած էին Հնչակեան գաղափարով, հայրենասիրութեամբ: Այո, քեսապցի հայրենասէր երիտասարդութիւնը, իրենց գաղափարական ուսումը ստացած էին Գալատուրանի «Կայծ ուսանողական եւ Քեսապի «Սարգիս Տխրունի» ուսանողական Միութեան շարքերէն ներս: Այո, անոնք մկրտուած էին Տէր Պետրոս Բաբուճեանի ձեռքով, նոյնպէս Քեսապի «Մոռցուած հերոս» եւ յեղափոխական Հայր Նիկողոս Պէօճէքեանի, որ Հնչակեան ղեկավար «Պարոն» Աղասիի օրով իր ուխտը կատարած է 1893ի Թուականներուն:*

*Ժողովուրդը Թխմուած ապրանքատար «քամիոն»ներուն վրայ, վերջին հրաժեշտը կու տար իր գիւղին, հողին, տան, հիւղակին:*

*Հայրենասիրական երգեր «Հէյ Ջան Երեւան» կուսակցական երգեր «Հնչակեան ենք Մենք Ուխտեալ Ջինուորներ», «Ախ ընկեր պէտք է պէտք է, Հնչակեան Ջինուոր պէտք է», «Արշաւեցէք ընկերներ դէպի սիրուն Վան, պատրաստ ենք ընկերներ երթանք Հայաստան»: Այո, պատրաստած էին ընկերներ եւ կ՚երթային Հայաստան:*

*Երկար է շարքը մեր հայրենասիրական, կուսակցական երգերուն: Այո, դատարկուեցան ամբողջ գիւղեր, «Մոլու Թաղ» որ կը հաշուէր երեսուն հինգ ընտանիք ամբողջութեամբ Հնչակեան: «Պաշուրտ» տասնհինգ ընտանիք ամբողջութեամբ Հնչակեան: Պարպուած էր «Սեւ Աղբիւր» Հնչակեան բերդը, ուր տեղի կ՚ունենային միջ-մասնաճիւղային ժողովները:*

*Բեռնատար կառքերը կը դիմէին Լիբանան: Ճամբու ամբողջ երկայնքին, մեքենաները իրենց ետին կը Թողուն Լաթաքիան, Պանիասը, Թարթուսը, Առուատ կղզին ուր աքսորուած էր մեծ հռետոր, անմրցելի հայրենասէր Ընկ. Սարգիս Տխրունին:*

*Մեր Հնչակեան ընկերներուն հայեացքը ուղղուած էր բերդին, քանի իրենք շառաւիղն են Տխրունիական գաղափարին, որ կը նշանակէ՝ հայրենասիրութիւն:*

*Ամբողջ կարաւանը հինգ վայրկեան կանգ կ՚առնէ ճամբու եզրին: Հայրենադարձները իրենց հայեացքները կը յառեն կղզիին, ուր Սարգիս Տխրունի աքսորուած էր հայրենասիրութեան համար: Յանկարծ մԹնոլորտը կը Թնդայ «Կայծեան Երիտասարդութիւնը» միաբան կ՚երգէ.*

Բանտ ու աքսորանք,
Գնդակ ու զնտան,
Եւ մատնութիւններ,
Տեռորներ անվերջ,
Չեն կարող մարել,
Յուրը սրբազան,
Գաղափարի որ
Կ՚ուռճանայ մեր մէջ:

*Ուրիշ երիտասարդ մը բռունցքը վեր առած կը բացականչէ, «Տխրունին կրկնելով, «Վատ է այն, որ հայրենասէրը, ճշմարտախօսը գնդակով կը լռեցնէ»: Այո, Հնչակեան հայրենասէր երիտասարդութիւնը նայուածքները յառած բերդին, նորոգեց իր ուխտը, մեկնելէ առաջ Մայր Հայրենիք, ուր կ՚երԹար արիւն-քրտինք խառնելու հայրենաշինութեան, որուն շաղախ դարձուց Ս. Տխրունին իր բոսոր արիւնը: Քեսապցին վերջին յարգանք կ՚ընծայէր ճամբուն եզրին խմբուած հիւրասէր, ազատատենչ Սուրիոյ արաբ ազնիւ ժողովուրդին, ընդունելով անոնց բարեմաղԹանքները «Ախի արմանի, մաասալամի, Ալլա մաաքուն» (Եղբայր հայեր երԹաք բարով, Աստուած հետերնիդ):*

*Երգերը կը լեցնէին մԹնոլորտը.*

*«Այ կարաւան Ջան կարաւան քշիր քո ճամբան, դէպի Հայաստան»: Այսպէս, երգով-պարով, տաուլ-զուռնայով քեսապցին «կտրեց երեք հարիւր քիլոմեԹր ճամբան, անցնելով Թրիփոլիէն, ՊաԹրունէն, Ճիպէյլէն, Ճիւնիէն, ԱնԹիլիասէն եւ հասաւ Պէյրութ:*

*Հոս եւս, հայրենադարձուողները արժանացան Լիբանանի հիւրասէր ժողովուրդին մաղԹանքներուն:*

*Քեսապցին հասաւ ԳարանԹինա, առանց զանգատելու ճամբուն հեռաւորութիւնը, յոգնութիւնը, Թուչունի պէս Թառած ապրանքատար «քամիոն»ներուն վրայ: Նոյն եռուզերը հոս եւս... Յուլիս 22, 23, 24, 25ի գիշեր ու ցերեկ ԳարանԹինան վերածուած էր հարսնետան: Կը յորդէր հայ երգով, քեսապցիական պարով, սրինգով ու տաւուլ-զուռնայով...:*

*Քեսապցին գիտէ ուրախանալ եւ ուրախացնել:*

*ԳարանԹինայի այս անմոռանալի պատմական օրերուն մասին՝ «Արարատ» օրաԹերԹը գովքը կ՚ընէր քեսապցի հայրենասէր ժողովուրդին: Այդ օրերուն, ընկ. Միհրան Սէֆէրեան «Արարատ»ի էջերէն լաւապէս պատկերացուցած էր Քեսապի-Գարատուրան գիւղի յեղափոխական, Հնչակեան Տէր Պետրոս Քհնյ. Բաբուճեանը, որ Հնչակեան օծուած էր «Պարոն» Աղասիի ձեռքով, Գալատուրան «Հնչակեան» Աղբիւր ակին: Ան իր հայրենասէր հօտին հետ կ՚երԹար Աւետեաց Երկիր, իր ուխտը կատարելու Էջմիածնի կամարներուն տակ: Քեսապցի չէն ժողովուրդէն 405 ընտանիք, չորս օր մնալէ վերջ ԳարանԹինայի մէջ, 25 Յուլիս 1947ի իրիկնամուտին, ժամը վեցուկէսին, ճամբայ ելաւ դէպի Մայր Հայրենիք: Մեկնողներուն մէջ կային Կասիոսի Հայրենակցական ՄիուԹեան հարիւր տասներեք գործօն անդամներ: Բոլորն ալ մեկնեցան մեր փառքը կազմող Հայաստան, իրենց քրտինքը ու հեւքը խառնելու Մայր Հողի ծաղկումին: Դիտել տանք որ այդ պատմական օրը, հայրենադարձի նաւ մտնող առաջինները եղան քեսապցիները: Կարճագոյն միջոցի մէջ իրենց ծանր ու ԹեԹեւ գոյքերով նաւ փոխադրուեցան: Քեսապցին Կասիոսի Հայրենակցական ՄիուԹեան, Հ.Մ.Մ.ին եւ այլ աշխատողներուն հանդէպ երախտագիտուԹիւն ունի: ՊէյրուԹի քեսապցի Հնչակեան ընկերներ շաբաԹներով Քեսապ գացին կազմակերպելու համար ժողովուրդին ներգաղԹը:*

*Այլ կերպ կարելի չէր: Քեսապցի հայրենասէր ժողովուրդին փոխանակ ցոյց տալու Ամերիկայի, Գանատայի ճամբան, ուր հայը կ՚այլասերի, կաԹիլ-կաԹիլ կը մահանայ ամէն օր, ամէն ժամ գիջելով իր հայու հոգիէն մաս մը, անոնք դէպի Արարատ սեւեռեցին իրենց ժողովուրդի հայեացքը: Քեսապցի հայրենասէր ժողովուրդը, որ մնացորդն է Բագրատունեաց-Կիլիկեան իշխանուԹեան, նախընտրեցին Խ. Հայաստանի լուսաւոր ճամբան, ուր «Փոպետան», որ կը նշանակէ «ՅաղԹանակ», «մարապա» քեսապցիները փոխադրեց Հայաստան, որ անոնք ապրին ապահով եւ ազատ, միշտ տէր իրենց վաստակին ու ինչքին:*

---

# ԴԱՐՈՒՍ ԱՆԱՌԱԿՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑ ԹԻՒ ԿԸ ԿԱԶՄԵՆ

*Շարունակուած էջ 13-էն*

*են:*

*-Ի՞նչ է գործդ, ո՞ւր աշխատած ես, ո՞ր քաղաքներուն մէջ:*

*-Պարոն Դատաւոր, ես մարդու քով չեմ գործած: Իմ արհեստս մարդասպանութիւն է:*

*Մարդասպանին այս անսովոր ու անօրինակ յայտարարութիւնը՝ ժխորեց սրահին մԹնոլորտը հազագային պայԹուցիկ բացականչուԹեամբ:*

*Րոպէ մը լռուԹիւն տիրեց, մինչեւ որ սրահը վերստացաւ իր բնական հանդարտուԹիւնը:*

*Դատաւորը բարեհամբոյր դէմքով անձնաւորուԹիւն մը, վերսկսաւ իր հարցաքննուԹիւնը:*

*-Կը յիշե՞ս զոհերուդ Թիւը:*

*-Ոչ, չեմ հաշուած, պատասխանեց մարդասպանը, առանց դանդաղելու:*

*-Ե՞րբ կը գործես ոճիրները:*

*-ՄերԹ գիշերային ու մերԹ ցերեկային ժամերուն, ինչպէս պատեհուԹիւնը կը ներկայանայ:*

*Դատաւորը պահ մը մտածկոտ կանգ առաւ, հաւանաբար յաջորդ հարցումին վրայ մտածելով կը Թուէր, Թէ ինքն ալ շփոԹուԹեան մատնուած էր եւ առաջին անգամ կը հանդիպէր մարդասպանի մը, որ չէր ստեր եւ կը քողազերծէր իր ոճրային արարքները, կարծես՝ հասարակ իրողուԹիւններ ըլլային:*

*Մարդասպանը՝ շատ անգամ գլուխը կը դարձնէր ունկնդիրներուն վրայ եւ կը տարածէր նայուածքը, մեկը տեսնելու նկատումով:*

*Քսանէն երեսունի միջեւ տարիք մը կը ցուցադրէր, առոյգ ու պարԹեւահասակ, գլխուն ետեւ մազերը փնջախիտ վար կախուած:*

*Կը մտածէին, Թէ այս գեղադէմ երիտասարդը, որ այնքան տպաւորիչ կ՚երեւար արտաքուստ ի՞նչպէս կրնար անգուԹ մարդասպանուԹիւններու հեղինակը ըլլալ եւ խոնաւ ու մԹին բանտախուցերու մէջ հիւծել իր կեանքը:*

*Շատ կարճ տեւեց հարցաքննուԹիւնը եւ դատը տարիներու երկար յետաձգումով մոռացուԹեան տրուեցաւ յիշողուԹիւններու մէջ, նաեւ իր ինքնուԹիւնը:*

*Քանի մը տարի առաջ, հեռուստատեսիլի վրայ տեսայ մահուան դատապարտուածներու շարքին իր կերպարը, համանոյն գրաւչուԹեամբ, ժամանակի մաշումէն զերծ մնացեր էր իր գարունամեայ երիտասարդուԹիւնը:*

*Ահաբեկչութիւնը, այս մեծ ու ազատ երկրին մէջ համատարած սպառնալիք ու սարսափ դարձած է ամենօրեայ ոճիրներով:*

*Դպրոցները եւ ուսումնարաններ կը յորդին անառակներով եւ ոճրային արարքներով:*

*Ծնողները վախով ու վարանումով կը ճամբեն իրենց զաւակները դպրոց եւ մտատանջ ու անհամբեր կը սպասեն անոնց անվտանգ վերադարձին:*

HARUT DER-TAVITIAN
License #0B28270

1807 W. Glenoaks Blvd., Suite 202
Glendale, CA 91201

Tel.: 818/502-3233
Fax: 818/502-3244
Pgr.: 818/608-9898
info@excelhye.com
www.excelhye.com

EXCEL
HYE INSURANCE SERVICES

AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

ՀԲԸՄ 100 ՏԱՐԻ·YEARS AGBU

*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:*
*Proud Past, Exciting Future.*

# AGBU IN ITS SECOND CENTURY.

## A Centennial Symposium.

**"Tribute to the Past - Pathways to the Future"**

*Presented by:*
*AGBU SOUTHERN CALIFORNIA DISTRICT COMMITTEE*
*In Cooperation with*
*USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES*
*Part of USC College of Letters, Arts & Sciences*

**SATURDAY, OCTOBER 28, 2006**
9:30 AM – 3:30 PM
University of Southern California, Town and Gown
Figueroa and Exposition - Gate 3 Entrance, Los Angeles, CA

**Overview of Global Activities of AGBU with a focus on United States and Armenia**

The Seminar will Address:

- **Organizational Structure**
- **Cultural and Educational Activities**
- **Sports, Youth, and Young Professionals Programs**
- **New Challenges and Opportunities**
- **Constituency Development**

Paper Presentations by:

**Dr. R. Hrair Dekmejian** *(USC)*
**Ms. Ramela Abbamontian** *(PhD Candidate, UCLA)*
**Dr. Mihran Agbabian** *(President Emeritus, American University of Armenia)*
**Dr. Harutyun Alexanyan** *(Armenian State Pedagogical University, Yerevan)*
**Rev. Fr. Ktrij Devejian** *(Mother See of Holy Etchmiadzin)*
**Dr. Matthew Jendian** *(CSU Fresno)*
**Dr. Silva Karayan** *(California Lutheran University)*
**Dr. Ani Moughamian** *(LA Unified School District)*
**Dr. Ani Yazedjian** *(Texas State University)*

*Special Guest Speaker:*
**Hon. Paul R. Ignatius**
*Former Secretary of the Navy - Under Secretary of the Army - Assistant Secretary of Defense*

Complimentary breakfast, lunch and snacks will be served
**Attendance is by reservation only – Seating is limited**
Reservation Deadline: October 18, 2006
Please RSVP at: AGBU Alex Manoogian Center (626) 794-7942 or seminar@agbuca.org

**AGBU CENTENNIAL SPONSORS**

Commerce Casino LOS ANGELES
CROWNE PLAZA HOTELS & RESORTS
6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.
BANK of ORANGE COUNTY
BOC
MEMBER FDIC
A Division of Placer Sierra Bank
Commercial Real Estate
Term Loans and Lines
Free Business Checking
High Rate Money Market

**Contact:**
**Gus Ghusayni**
**Senior Vice President**
411 N. Central Avenue
Glendale, CA 91203
bankoforangecounty.com
(818) 548-2720

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ՖՈՒԹՊՈԼ

## «ՓԻՒՆԻԿԸ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ



Ֆուտպոլի Հայաստանի առաջնութեան 25-րդ հանգրուանին առաջատար «Փիւնիկը», 12:1 հաշուով յաղթելով «Կիլիկիային», 6-րդ տարին անընդմէջ դարձաւ Հայաստանի ախոյեան:

Թէեւ առաջնութեան աւարտին դեռ 3 հանգրուան կայ, «Փիւնիկը» 14 կէտով առաջ է 2-րդ տեղը ընթացող «Բանանց»-էն: Վերջինս այս 0:1 հաշիւով պարտուեցաւ «Միկային», որը 3-րդ դիրքի վրայ է:

Յայաստանի առաջնութեան դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Փիւնիկ | 25 | 20 | 4 | 1 | 76-19 | 64 |
| Բանանց | 25 | 16 | 2 | 7 | 54-24 | 50 |
| Միկա | 25 | 14 | 6 | 5 | 38-19 | 48 |
| Արարատ | 25 | 14 | 4 | 7 | 42-30 | 46 |
| Կիլիկիա | 25 | 6 | 4 | 15 | 37-63 | 22 |
| Ուլիս | 25 | 5 | 2 | 18 | 26-50 | 17 |
| Շիրակ | 25 | 3 | 7 | 15 | 16-55 | 16 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ԿԸ ՄՐՑԻ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 21-ին Հայաստանի մինչեւ 19 տարեկանների ազգային հաւաքականը՝ գլխաւոր մարզիչ Արմէն Գյուլբուդաղեանի գլխաւորութեամբ, մեկնեցաւ Կիպրոս, ուր Հոկտեմբեր 27-էն Նոյեմբեր 2-ը տեղի կ՚ունենայ մինչեւ 19 տարեկանների Եւրոպայի Առաջնութեան զտումի փուլի խմբային մրցաշարքը: Այս խմբուին մէջ ընդգրկուած էն Հայաստանի, Հունգարիայի, Կիպրոսի եւ Ատրպէյճանի ազգային հաւաքականները:

Առաջին հանդիպումին Հայաստանի հաւաքականը կը մրցի Ատրպէյճանի հաւաքականի հետ Հոկտեմբերի 27-ին Լառնաքայի »Անտոնիս Պապադոպուլոս« մարզադաշտին վրայ: Նոյն օրը Լառնաքայի »Ամոշոստոս-Ամբերիա« մարզադաշտին վրայ տեղի կ՚ունենայ Հունգարիա-Կիպրոս հանդիպումը:

Երկրորդ հանդիպումին Հայաստանի հաւաքականը կը մրցի Կիպրոսի դէմ Հոկտեմբերի 29-ին: Խմբակի վերջին հանդիպումները տեղի կ՚ունենան Նոյեմբեր 1-ին: Լառնաքայի մէջ Հայաստանը կը մրցի Հունգարիայի հետ:

## ԲՌՆԱԳԱՂԹ...

*Շարունակուած էջ 14-էն*

ունեցող անձինք: Առանձին աշխատողների կարգադրել էր մասնակցել ընտանիքների տեղահանմանը մինչեւ երկաթուղային կայարան: Իրեն յանձնարարուած է եղել կազմակերպել մէկ օր առաջ ծննդաբերած մօրը ու մանկան ծննդատնից տեղահանումը: Վարդուշը մերժել էր կատարելու հրամանը, դատախազը զայրացած նրա յանդգնութիւնից, կարգադրել էր գնալ աշխատասենեակ: Անձկանօք սպասել էր, սակայն մի քանի ժամ յետոյ թոյլատրել էին գնալ տուն: Արուսինն էր պարսաւել նրան, այդ գիշեր կարող էին ձերբակալել իրեն:

Առաւօտեան աշխատատեղում էր եղել, բոլորը ակնապիշ նայել էին իրեն, մի քանի օրեր նոյնը: Այդպէս էր այդ իշխանութիւնը, ասում էին մարդը գնահատուած է եղել 70 կոպէկ, այն էլ իրեն գնդակահարելու փամփուշտի արժէքը...: Մի խորոտ տղամարդ էլ կատարած չէր եղել անկողնային մի հիւանդի տեղահանումը, պահանջել էր ստուգում, իր բուռն հակադարձութիւնից յետոյ նրան աքսորի չէին տարել: Եւ տիկին Վարդուշը պատմում էր նաեւ, որ մի քանի ամիս յետոյ, դարձեալ ընդհանուր ժողով էր հրաւիրուած եղել, եւ դատախազ Յովհաննիսեանը այսպէս էր ելոյթ ունեցել «Ես ակամայ կատարեցի Մոսկուի հրամանը, այն սահմանադրական ու օրէնսդրական իրաւական հիմք չունէր, որի համար այսօր իմ պաշտօնից հրաժարուելու դիմումնագիր եմ ներկայացրել, միայն Վարդուշն էր համարձակուել չկատարելու իմ հրամանը, ճիշդ էր նա»: Այդ խորոտ հայուն յետագայում նորէն պատասխանատու պաշտօնի էին նշանակած եղել, անշուշտ Խրուշեան տարիներին:

Հայոց Խորհրդարանը, Ազգային Ժողովը, ամէն տարուայ Յունիսի 14ը յայտարարել է Բռնագաղթուածների յիշատակման օր, եւ քաղաքակրթութեան բեմից հեռացած այդ վարչակարգի բռնարարքների դեռ ինչքան յիշատակման օրեր պիտի սահմանուեն:


Jessica Demirdjian
REALTOR®

Prudential

California Realty
9878 Hibert Street
San Diego, CA 92131
Bus 858 653-6400 Fax 858 653-6440
Cell 619 846-7738 jessicad@prusd.com
An independently owned and operated member of Prudential Real Estate Affiliates, Inc.


## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

### ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան իններորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Մանչեսթըր Եուն. - Լիվըրփուլ | 2-0 | Ուիկան Աթլ. - Մանչեսթըր Սիթի | 4-0 |
| Միտըլզպորօ - Նիւքէսըլ | 1-0 | Էվըրթըն - Շեֆիլտ Եուն. | 2-0 |
| Ռիտինկ - Արսենալ | 0-4 | Չելսի - Փորթսմութ | 2-1 |
| Թոթենհամ - Ուէսթ Յամ | 1-0 | Չարլթըն - Ուաթֆորտ | 0-0 |
| Պլէքպըրն - Պոլթըն | 0-1 | Աստոն Վիլլա - Ֆուլհամ | 1-1 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մանչեսթըր Եունայթըտ | 9 | 7 | 1 | 1 | 19-5 | 22 |
| Չելսի | 9 | 7 | 1 | 1 | 15-5 | 22 |
| Պոլթըն | 9 | 6 | 2 | 1 | 10-4 | 20 |
| Արսենալ | 8 | 5 | 2 | 1 | 15-4 | 17 |
| Էվըրթըն | 9 | 4 | 4 | 1 | 14-6 | 16 |
| Փորթսմութ | 9 | 5 | 1 | 3 | 13-5 | 16 |
| Աստոն Վիլլա | 9 | 3 | 6 | 0 | 11-6 | 15 |

Վոլսպուրկոմանիոյ ֆութպոլի առաջնութեան ութերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Տորթմունտ - ՎՖԼ Պոխում | 1-1 | Աախըն - Քոթպիուս | 1-2 |
| Յերթա Պերլին - Մէօնշընկլատպախ | 2-1 | Այնթ. Ֆրանքֆորթ - Նիւրենպըրկ | 2-2 |
| Շալքէ - Յանովըր-96 | 2-1 | Արմ. Պիլըֆէլտ - ՖՍՎ Մայնց | 1-0 |
| Վոլսպուրկ - Շթութկարթ | 1-1 | Պ. Լիվըրքուզըն - Յամպուրկ | 1-2 |
| | | Վարտըր Պրէյմըն - Պայերն Միւնիխ | 3-1 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Վարտըր Պրէյմըն | 8 | 5 | 1 | 2 | 21-10 | 16 |
| Շալքէ-04 | 8 | 5 | 1 | 2 | 11-8 | 16 |
| Յերթա Պերլին | 8 | 4 | 3 | 1 | 16-9 | 15 |
| Պայէրն Միւնիխ | 8 | 4 | 1 | 3 | 12-10 | 13 |
| Նիւրենպըրկ | 8 | 2 | 6 | 0 | 10-6 | 12 |
| Աախըն | 8 | 4 | 0 | 4 | 14-12 | 12 |
| Տորթմունտ | 8 | 3 | 3 | 2 | 11-10 | 12 |
| Շթութկարթ | 8 | 3 | 3 | 2 | 14-14 | 12 |

### ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան եօթերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Մեսինա - Էմփոլի | 2-2 | Փարմա - Ասքոլի | 1-0 |
| Քալիարի - Թորինօ | 0-0 | Ֆիորենթինա - Ռեճինա | 3-0 |
| Լիվորնօ - Սիենա | 0-0 | Աթալանթա -Սամտորիա | 3-2 |
| Ա. Էս. Ռոմա - Քիեւօ | 1-1 | Ա. Սէ. Միլան - Փալերմօ | 0-2 |
| Ուտինեզէ - Ինթէր Միլան | 0-0 | Քաթանիա - Լացիօ | 3-1 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ինթէր Միլան | 7 | 4 | 3 | 0 | 12-8 | 15 |
| Փալերմօ | 7 | 5 | 0 | 2 | 16-12 | 15 |
| Ա. Էս. Ռոմա | 7 | 4 | 1 | 2 | 11-4 | 13 |
| Ուտինեզէ | 7 | 3 | 3 | 1 | 9-4 | 12 |
| Աթալանթա | 7 | 3 | 3 | 1 | 10-7 | 12 |
| Սիենա | 7 | 3 | 3 | 1 | 8-6 | 12 |
| Լիվորնօ | 7 | 3 | 3 | 1 | 6-4 | 12 |

### ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան տասերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Լիլ - Լօրիան | 1-0 | Սէնթ Էթիէն - Լը Մանս | 2-0 |
| Նանսի - Նանթ | 1-0 | Սոշօ - Պորտօ | 2-1 |
| Սըտան - Լանս | 2-2 | Մոնաքօ - Թուլուզ | 1-3 |
| Ռընէ - Նիս | 1-0 | Մարսէյլ - Լիոն | 1-4 |
| Վալանսիէ - Թրուա | 3-1 | Օքսէռ - Փարիզ Սէն Ժերմէն | 0-0 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Լիոն | 10 | 9 | 1 | 0 | 26-8 | 28 |
| Մարսէյլ | 10 | 6 | 2 | 2 | 18-9 | 20 |
| Նանսի | 10 | 5 | 4 | 1 | 10-5 | 19 |
| Թուլուզ | 10 | 5 | 3 | 2 | 15-11 | 18 |
| Լիլ | 10 | 5 | 2 | 3 | 15-11 | 17 |
| Սէնթ Էթիէն | 10 | 5 | 2 | 3 | 15-13 | 17 |

### ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան եօթերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Վիլզարէալ - Լեվանթէ | 1-1 | Էսփանիոլ - Ռասինկ | 2-2 |
| Տեփ. Քորունա - Աթլեթ. Մատրիտ | 1-0 | Յուէլվա - Կեթաֆէ | 1-2 |
| Սարակոսա - Ռէալ Պեթիս | 2-1 | Վալենսիա - Օսասունա | 1-0 |
| Աթլեթ. Պիլպաօ - Սելթա Վիկօ | 0-1 | Մայորքա - Ռէալ Սոսիէտ | 0-0 |
| Սեւիլլա - Կիմնասթիք | 2-1 | Ռէալ Մատրիտ - Պարսելոնա | 2-0 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Պարսելոնա | 7 | 5 | 1 | 1 | 16-7 | 16 |
| Վալենսիա | 7 | 5 | 1 | 1 | 13-5 | 16 |
| Սեւիլլա | 7 | 5 | 0 | 2 | 15-6 | 15 |
| Ռէալ Մատրիտ | 7 | 4 | 2 | 1 | 10-3 | 14 |
| Տեփօրթիւօ Քորունա | 7 | 4 | 2 | 1 | 9-5 | 14 |
| Սարակոսա | 7 | 4 | 1 | 2 | 16-10 | 13 |
| Աթլեթ. Մատրիտ | 7 | 4 | 1 | 2 | 10-6 | 13 |

# ԶՐՈՅՑ ՀՀ ԱԳ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻ ՀԵՏ

*Շարունակուած էջ 6-էն*

*անջրպետ. կայ, ես ինչ-որ զարմանալի բան չեմ ասում: Բայց մեր պարագայում դա բացասական շատ վատ հետեւանքներ է թողնում, որովհետեւ մեզ մօտ ինստիտուցիոնալ հիմքերն ամուր չեն:*

Ն.Փ. - Ես ուզում եմ հասկանալ, թէ ի՞նչ է նշանակում իշխանութիւն-ժողովուրդ անջրպետ: Ամէն մէկը սրա տակ մի ինչ-որ բան նկատի ունի: Դուք իշխանութիւն- ժողովուրդ անջրպետ ասելով՝ կոնկրետ ի՞նչ նկատի ունէք:

***Վ.Օ. -** Այսօր փոխադարձ վստահութեան պակասը՝ որպէս երաշխիք պետութեան անվտանգութեան, բարեկեցութեան: Այդ խնդիրը մեզ մօտ դեռեւս սաղմնային վիճակում է գտնւում:*

Ն.Փ. - Կը ներէք, այսինքն՝ ժողովուրդը չի՞ վստահում իր իշխանութեանը:

***Վ.Օ. -** Մի մասը վստահում է, մի մասը չի վստահում:*

Ն.Փ. - Չէ, եթէ դուք խօսում էք անջրպետի մասին, նշանակում է, որ ոչ մէկը չի վստահում:

***Վ.Օ. -** Չէ...*

Ն.Փ. - Ուրեմն, մեզ մօտ այնպէս է, ինչպէս ձեր նշած երկրներում, եւ լուծելու խնդիր չկայ, որովհետեւ ձեր նշած երկրներում ոչ ոք չի խօսում անջրպետի մասին:

***Վ.Օ. -** Չէ, իհարկէ կայ, իհարկէ կայ:*

Ն.Փ. - Հիմա ժողովուրդը իշխանութեանը վստահո՞ւմ է, թէ՞ չի վստահում:

***Վ.Օ. -** Մի հատուած կայ, որ չի վստահում:*

Ն.Փ. - Իսկ այդ անջրպետը քանի՞ տոկոս է:

***Վ.Օ. -** Դժուարանում եմ ասել, ես չեմ կարող տոկոսներ ասել: Բայց ակնյայտ է, այսօր օդում էլ զգում ես, մարդկանց հետ խօսելիս էլ զգում ես, որ որոշակի անվստահութիւն կայ: Մեր ժողովրդի մօտ ցինիզմ կայ այսօր պետականութեան, իշխանութեան նկատմամբ, որը բացասաբար է անդրադառնում, որովհետեւ ինստիտուտները մեզ մօտ լաւ չեն ձեւաւորուել: Այդ ցինիզմը Արեւմուտքում էլ շատ իշխանութիւնների նկատմամբ կայ:*

Ն.Փ. - Բայց Արեւմուտքում նման իշխանութիւնները փոխւում են, իսկ ձեր իշխանութիւնը այդպէս էլ չի դառնում նախորդ իշխանութիւն:

***Վ.Օ. -** Ես շարունակեմ թուարկել...*

Ն.Փ. - Չէ, բայց ես ուզում եմ հասկանալ...

***Վ.Օ. -** Միգուցե յաջորդին կը դառնայ: Դրա համար ես ուզում եմ խնդիր դնել, որ եթէ իսկապէս ժողովուրդը տեսնում է եւ զգում է, որ դա բացասաբար է անդրադառնում, ուրեմն թող ճիշդ կողմնորոշուի իր ընտրութեան մէջ, որպէսզի կամաց-կամաց մենք կարողանանք յաջորդ ամիսների, տարիների ընթացքում այդ բացը փակել:*

Ն.Փ. - Լաւ, հասկանում եմ, բայց եթէ ինքը հեռուստացոյցով միայն երեք մարդու է տեսնում, ո՞նց պէտք է ճիշդ կողմնորոշուի: Մենք իրեն տանում, ասում ենք՝ դու ճիշդ կողմնորոշուի՝ Վարդան Օսկանեանի, Գագիկ Ծառուկեանի եւ Սերժ Սարգսեանի միջեւ, հա՞:

***Վ.Օ. -** Մենք այդ հարցը արդէն փակեցինք եւ հիմա նորից չենք կարող հետ գնալ հարցազրոյցի սկզբին:*

Ն.Փ. - Ինչո՞ւ չենք կարող:

***Վ.Օ. -** Որովհետեւ պատասխանել եմ ես դրան: Դուք մի քիչ ծայրայեղութեան էք տանում: Գագիկ Ծառուկեանի, Սերժի, Վարդանի կլիպները՝ դրանք մեր խօսքերն էլ նոյնիսկ չեն: Ցոյց է տալիս իմ հանդիպումը սրա-նրա հետ: Բայց ընդդիմութեան ներկայացուցիչներին որոշ հեռուստակայաններում, ես կարծում եմ, բաւական ծաւալուն ժամ է տրւում, հնարաւորութիւն է տրւում, որ այդ մարդիկ արդէն կոնկրետ իրենց խօսքը ասեն: Միանշանակ չէ. ճիշդ է, պրոբլեմ կայ, անհաւասարակշռութիւն կայ, բայց միանշանակ ասել, որ միայն այս մարդիկ են երեւում, դա էլ, ես կարծում եմ, որ մեր հեռուստակայանների համար արդար բան չենք ասում: Որովհետեւ ես տեսնում եմ, միացնում եմ եւ մեծ հաճոյքով էլ լսում եմ Վազգէն Մանուկեանին էլ, Դեմիրճեանին էլ, Գեղամեանին էլ, կամ այնպէս չէ, որ ժողովուրդը չգիտի, թէ այդ մարդկանց մտածողութիւնն ինչպիսին է: Բայց այսօր այդ բացը, անվստահութեան մոմենտը կայ, եւ դա բացասաբար է անդրադառնում մեր բոլորի վրայ, եւ պէտք է դրա վրայ շատ լուրջ աշխատել: Երրորդ՝ կառավարութեան գործունէութեան էֆեկտիվութեան բարձրացում պէտք է լինի, անպայման:*

Ն.Փ. - Կը ներէք՝ ինչո՞վ է մեր կառավարութիւնը ոչ էֆեկտիւ. տնտեսութիւնը զարգացնում է, արտաքին քաղաքականութեան բնագաւառում լուրջ յաջողութիւններ ունի եւ այլն, եւ այլն, ի՞նչն է անէֆեկտիվութիւն:

***Վ.Օ. -** Այս բոլորը յարաբերական է: Իհարկէ, կայ տնտեսական աճ..*

Ն.Փ. - Էհ, եթէ յարաբերական է՝ կարող ենք բարձրացնել, եւ պարզուի, որ այդքան էլ բարձր չէ...

***Վ.Օ. -** Դրա համար էլ ես ասում եմ՝ ոչ թէ ստեղծել, այլ՝ բարձրացնել: Հասկանո՞ւմ էք, էֆեկտիվութիւնը. եթէ ես ասեմ, որ այս կառավարութիւնը հարիւր տոկոս էֆեկտիվութեամբ է աշխատում, ինձ վրայ էլ կը ծիծաղեն:*

Ն.Փ. - Բայց կը ներէք, պարոն Օսկանեան, հիմա եկէք գտնենք, որեւէ գործիչ, որն ասում է՝ եկէք ցածրացնենք կառավարութեան արդիւնաւէտութիւնը, շատ է արդիւնաւէտ:

***Վ.Օ. -** Չէ, ես, օրինակ, չեմ լսել մէկին, որ խօսի կառավարութեան անարդիւնաւէտութեան մասին:*

Ն.Փ. - Հարիւրաւոր գրանտային ծրագրեր, սեմինարներ, քննարկումներ, փոխնախարարներ, վարչապետը, նախագահը՝ բոլորը ասում են՝ մէկ պատուհանի սկզբունք, աւելացնենք էֆեկտիվութիւնը եւ ընդհանրապէս զարկ տանք կոմունիզմին:

***Վ.Օ. -** Ստացւո՞ւմ է, թէ՞ չէ:*

Ն.Փ. - Իհարկէ, չի ստացւում: Նոյնն էլ ձեզ մօտ չի ստացուի:

***Վ.Օ. -** Ես չգիտեմ, խնդիրը պէտք է դնել, որ յաջորդ եկողը պարտաւորուած լինի, որ իր մօտ ստացուի:*

**ԿՐՃԱՏՈՒԱԾ**

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցէով

**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**

# Հ.Բ.Ը.Մ.100 ԱՄԵԱԿ

*Շարունակուած էջ 1-էն*

*ուած՝ Հ.Բ.Ը.Մ.-ի 100-ամեակին, բարձր գնահատելով անոր «մատուցած ծառայութիւնները աշխարհացրիւ մեր ժողովուրդին ու Հայրենիքին»:*

*Երեկոն որ դրուած էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանաւորութեան տակ, տեղի ունեցաւ Հոկտ. 22ին, 2006 երեկոյեան ժամը 5.00ին, Առաջնորդարանի Գալայճեան Սրահին մէջ, ներկայութեամբ հոծ բազմութեան մը, որ եկած էր կրկին անգամ իր յարգանքը մատուցելու Հ.Բ.Ը.Մ.ին, որուն բարիքները անխտրաբար հասան աշխարհով մէկ մեր բովանդակ ազգին, լրիւ 100 տարի:*

*Օրուան պատշած յատագիր մը աւելցուցած էր հանդիսութեան փայլքը, որուն մէջ մեծ էր եղած նախաձեռնող յանձնախումբերու գնահատելի աշխատանքը:*

*Հանդիսավար Իրաւաբան Յովսէփ Կանիմեանի աւուր պատշաճի բացման խօսքէն ու Փրօֆ. Լեւոն Աբրահամեանի քայլերգներու կատարողութենէն ետք՝ Հայրապետական սրբատառ կոնդակը կարդաց Արժ. Տ. Մանուկ Քհնյ. Մարգարեան:*

*Վեհափառ Հայրապետը Իր Սրբատառ Կոնդակին մէջ գոհութիւն ու փառք կու տար Աստուծոյ, «որ Իր խնամքի ներքոյ առաջնորդեց եւ առաջնորդում է ընթացքը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ առատօրէն օրհնում ծառայողութիւնը նրա անխոնջ մշակների»: Անդրադառնալով հայ ժողովուրդի երախտապարտ ոգիին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կը գրէ. « Այսօր համայն հայ ժողովուրդը գնահատում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ նրա ազգանուէր գործիչների տարիներու վաստակը, հայոց ազգին մատուցած մեծագոյն ծառայութիւնները, նուիրումն ու սէրը»:*

*Իրաւաբան Ժպիտ Զինարի Ջերմաշունչ ասմունքէն ետք, լուսապաստարուեցաւ տեսաերիզ մը, որ լուսարձակի տակ կ'առնէր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան վաստակաւոր առաջնորդներն ու համանուն Միութեան բոլորած 100 տարուայ ուղին:*

*Գլխաւոր բանախօս Տօքթ. Սիմոն Սիմոնեան բարձր գնահատեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան իրագործած ազգային հայրենասիրական մշակութային ու կրթական գետնի վրայ ծաւալած բարեսիրական գործունէութիւնը, ինչպէս նաեւ, Մայր Աթոռ Սրբ. Էջմիածնի հետ Անոր բեղմնաւոր գործակցութիւնը:*

*Այնուհետեւ հանդէս եկան «Զարթօնք» նուագախումբը, Գեղարուեստական Ղեկավարութեամբ՝ Սարգիս Պետրոսեանի ու Երգիչ Արմէն Յովհաննէսեանի, ու նաեւ Վարդան եւ Սիրանուշ Գէւորգեաններու -հանրածանօթպարուսոյցներ- Կատարողական Խումբը՝ որոնք իրենց գեղարուեստականօրէն բարձր ելոյթներով խորը տպաւորութիւն թողուցին ներկայ հանդիսատեսներուն վրայ:*

*Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան Անդամներէն Սինան Սինանեան, իր սրտի խօսքին մէջ բարձր գնահատեց իր պատկանած Միութեան՝ Հայրենիքէն ներս, թէ Սփիւռքի տարածքին ծաւալած բարեսիրական գործունէութիւնը:*

*Անշուշտ եզրափակիչ խօսքը վերապահուած էր Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք Տէրտէրեանին: Ան շնորհակալ ոգիով իր ողջոյնները, օրհնութիւնները եւ յաջողութեան մաղթանքները յայտնեց «Հ.Բ.Ը.Միութեան Պատուարժան Նախագահ՝ Տիար Պերճ Սեդրակեանին, Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութեան եւ համայն անդամներուն»:*

*Առաջնորդ Սրբազանը, նաեւ, դիտել տուաւ թէ. «Հ.Բ.Ը.Միութիւնը այն նուիրական հաստատութիւնն է, որուն ոչ մէկ ուրիշ կազմակերպութիւն համաշունչ եւ հաւասար գործունէութիւն ծաւալած է՝ այն իմաստով, որ միշտ մնացած է Մայր Հայրենիքի եւ Սուրբ Էջմիածնի կողքին, անպայմանական իր զօրակցութեամբը առանց ազդուելու քաղաքական իրադարձութիւններէն»:*

***Տ.Ա.Գ.***

## ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼՔ

*ՎԱՉԷ ԳԻԶԻՐԵԱՆ ԸՆԴ ՍԻԼՎԱ ՏԱԻՌՈՒԹԵԱՆ*
*21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2006, Պէյրութ, Լիբանան*

*Մեր ջերմ շնորհաւորութիւնները ամուսնացող զոյգի ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն: Յատկապէս Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Աննա Գիզիրեանին:*

*«ՄԱՍԻՍ»*

## ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

**Փասատինայի մէջ հաստատութիւն մը կարիքը ունի աշխատաւորուհիներու cash register-ի վրայ: Հեռաձայն՝ (626) 833-2331:**

## ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**
**1060 N. ALLEN AVE. PASADENA**
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ՀԵՌԱՁԱՅՆԵԼ**
**(626) 797-7680 (626) 398-0506**

# Հայաստան Համահայկական Հիմնադրամ

## 9-րդ Միջազգային Թելեթոն

# I



# Armenia

Գոհաբանութեան Օր

Նոյեմբեր 23, 2006
KSCI-LA18 8am-8pm pst

Տեղեկութեան համար հեռաձայնել 1 800 888 8897

Կայքէջ www.armeniafund.org

© 2006 Armenia Fund. All rights reserved.